Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ | |
|---|---|
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐ-ԴՅՈՒՆՔՆԵՐ | 1. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը մշակված և ընդունված է:<br>2. ԿԿՀ աշխատակիցները վերապատրաստվել են, բարելավվել են ԿԿՀ-ի կողմից հարուցվող և իրականացվող վարույթների ընթացակարգերը և իրագործման մեխանիզմները:<br>3. Բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների պատշաճ իրացման համար ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ են մշակված, 2025 թվականի ավարտին վերապատրաստվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների առնվազն 50%-ը:<br>4. Բարելավվել է էթիկայի հանձնաժողովների գործունեությունը, մասնավորապես մշակվել և էթիկայի հանձնաժողովների կողմից կիրառվում են ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ, իսկ այն մարմիններում, որտեղ դեռևս առկա չեն էթիկայի հանձնաժողովներ, դրանք ձևավորվել են և հաջողությամբ գործում են:<br>5. Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում մշակվել և կիրառվում են վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույցներ:<br>6. Իրականացված է կանխարգելիչ գործիքների թվայնացում, ապահովվել է հայտարարագրման և բարեվարքության հարցաթերթիկների լրացման գործընթացների հնարավորինս ավտոմատացումը:<br>7. Ստեղծվել է իրավական ակտերի նախագծերի ex ante և իրավական ակտերի ex post փորձաքննության իրականացման նախադրյալները և ընտրվել է լիազոր մարմինը: Իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության եզրակացությունները գործնականում առկա են:<br>8. Ներդրվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման, դրանց զսպմանն ուղղված անհրաժեշտ կազմակերպական իրավական մեխանիզմներ:<br>9. Ապահովված է հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդյունավետ կիրառումը:<br>10. Ընդլայնված է բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը:<br>11. Ապահովվել է կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման արդյունավետությունը, կուսակցությունների ֆինանսական գործունեության հաշվետվողականությունը:<br>12. Ներդրված են նվերների ընդունման սահմանափակումների իրացման արդյունավետ մեխանիզմներ, ձևավորվել է նվերների ռեեստրը: |

<table>
<tr><td>ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒ-ԹՅՈՒՆ</td><td colspan="10">
<ul>
<li>Ներպետական իրավական համակարգում ներդրված է կոռուպցիայի կանխարգելման պետական քաղաքականության միասնական և համապարփակ օրենսդրություն:</li>
<li>Շարունակաբար՝ ըստ տարիների, ընդլայնված է բարեվարքության համակարգը՝ տարածվելով նոր ոլորտների և առավել մեծ թվով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վրա՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների:</li>
<li>Շարունակաբար՝ ըստ տարիների, ընդլայնված է հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների՝ ապահովելով հանրության առջև հաշվետվողականության ու թափանցիկության սկզբունքները:</li>
<li>Ձևավորված են կոռուպցիայի կանխարգելման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետ իրավական կառուցակարգեր և գործիքակազմեր:</li>
</ul></td></tr>
<tr><td colspan="2">ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ</td><td colspan="9">ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</td></tr>
<tr><td rowspan="3">Գործողություն 1.1. Վերանայել հանձնաժողովի անդամների ընտրության, պատասխանա-տվության կարգերը</td><td rowspan="2">Ելակետային տվյալներ</td><td colspan="5">Կատարողականի թիրախներ</td><td>Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ</td><td>Ստուգման միջոց</td><td>Կատա-րող մարմին</td><td>Համակատարող մարմին</td></tr>
<tr><td>2023 թ.</td><td colspan="2">2024 թ.</td><td>2025 թ.</td><td>2026 թ.</td><td rowspan="2">Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման</td><td rowspan="2">Իրավա-կան ակտի առկայու-թյուն</td><td rowspan="2">ՀՀ արդա-րադա-տության նախա-</td><td rowspan="2">Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)</td></tr>
<tr><td></td><td>II</td><td>I</td><td>II</td><td></td><td></td></tr>
</table>

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անհրաժեշտ է ստեղծել Հանձնաժողովի անդամի թեկնածուներին ներկայացվող պահանջների, ընտրության կարգի խստացման պայմաններ, ընտրության կարգով ներառված չեն քաղաքացիական հասարակության մասնագիտաց-ված ինստի-տուտները, միաժամանակ օրենսդիր մարմնի ազդեցության գործոնը շատ բարձր է: Անդամների պատասխանատ վության և գործունեության դադարեցման կարգավորում-ները լիարժեք չեն:<br><br>Ի տարբերություն հակակոռուպ-ցիոն դատարանի, | | | Օրենսդրորեն վերանայվել են անդամներին ներկայացվող պահանջները, ընտրության կարգը՝ ապահո-վելով քաղա-քացիական հասարակության մասնագիտացված ինստիտուտների մասնակցությունը, ինչպես նաև պատասխանատվ ության և գործու-նեության դադա-րեցման կարգա-վորումները, որով բարձրացվել է հանձնաժողովի անդամի, որպես ինքնուրույն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի, անհա-տական հաշվետվո-ղականությունը, գործունեության արդյունավետու-թյունը, պատասխա-նատվություն կրելու գործիքակազմը | | | հանձնաժողովի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության են արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով | Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ | ռարու-թյուն | Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br><br>(համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ<br><br>(համաձայնությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | դատախազու-թյան համապա-տասխան ստորաբաժան-ման և հակակո-ռուպցիոն դատարաններում պաշտոններ զբաղեցնող անձանց սոցիալական երաշխիքների՝ Հանձնաժողովի անդամները, ինչպես նաև աշխատակազմի վարձատրությունը տարբերակված չէ, մինչդեռ Հանձնաժողովի ծառայողների (այդ թվում՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող Հանձնաժողովի անդամների) վարձատրությունն ուղղակիորեն հանդիսանում է վերջիններիս անկախության և անկաշկանդ գործելու երաշխիքներից մեկը: | | | | | | | | | |

| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 1.2.**<br><br>Բարելավել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների ընթացակարգերը, սահմանել դրանց առանձնահատկությունները, և հստակեցնել ԿԿՀ գործառույթները՝ որպես վարչարարություն իրականացնող մարմին | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության են արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) |
| | 1. Օրենքով ԿԿՀ-ի կողմից հարուցվող տարբեր վարույթների իրականացման առանձնահատկությունները սահմանված չեն:<br>2. Առկա է անհստակություն հայտարարագրերի ստուգում և վերլուծություն եզրույթների վերաբերյալ, բացակայում են ստուգման գործընթացի մանրամասների վերաբերյալ կարգավորումներ՝ ստուգման հասկացությունը, հիմքերը, ժամկետները, ստուգումների իրականացման կարգը և | II | I | II | | | | | | |
| | | | | Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվել են ԿԿՀ-ի կողմից հարուցվող վարույթների առանձնահատկությունները, հստակեցվել են կիրառվող եզրույթները, ինչպես նաև սահմանվել են ժամկետները: | Օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պայմանները, ինչը հանգեցնում է գործընթացի որոշակիության բացակայության: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.3.**<br><br>Կատարելագործել բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Գույքագրված տվյալների հիման վրա անհրաժեշտության դեպքում վերանայվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի կարգավիճակը:<br><br>2. Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում | Իրավական ակտի առկայություն<br><br>Մեթոդական ձեռնարկների և ուղեցույցների առկայություն<br><br>Վերապատրաստումների զեկույցներ<br><br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատա- | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | Բարեվարքության հարցերով կազմակերպչի ինստիտուտը դեռևս լրիվությամբ չի կայացել: Քաղաքացիական ծառայությունում բարեվարքության հարցերով կազմակերպիչը հանդիսանում է անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատակից: Որոշ մարմիններում կա՛մ նրանց հաստիքները թափուր են, կա՛մ | II | I | II | | | | | | |
| | | | Գույքագրվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների իրականացման խոչընդոտները և կատարվել է ուսումնասիրություն բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակի վերաբերյալ: | 1.Կատարված գույքագրման և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և չափանիշների հիման վրա վերանայվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների կարգավիճակը:<br><br>2.Անհրաժեշտության դեպքում մշակվել են օրենսդրական նախագծեր, որով վերանայվել է բարեվարքու- | 1.Մշակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների պատշաճ իրացման համար ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ:<br>2.Բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնագիտական գիտելիքների զարգացման | Վերապատրաստվել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների առնվազն 80%-ը: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | էլ բարեվար-<br>քության<br>հարցերով<br>կազմակերպչի<br>գործառույթները<br>ժամանակա-<br>վորապես<br>վերապահված<br>են այլ ծառայողի<br>կամ<br>պաշտոնատար<br>անձի: | | | թյան հարցերով<br>կազմակերպիչ-<br>ների<br>կարգավիճակը՝<br>ապահովելով<br>վերջիններիս<br>անկախությունը<br>և անկողմնակա-<br>լությունը: | համար<br>կազմակերպ-<br>վել են<br>վերապատ-<br>րաստումներ՝<br>հաստատված<br>ծրագրերի: | | հավանության են<br>արժանացել ՀՀ<br>կառավարության<br>կողմից և<br>ներկայացված են<br>ՀՀ ԱԺ-ի<br>ընդունմանը:<br>3. Բարեվարքու-<br>թյան հարցերով<br>կազմակերպիչ-<br>ների գործառույթ-<br>ների պատշաճ<br>իրացման համար<br>ուղեցույցներ և<br>մեթոդական<br>ձեռնարկներ են<br>մշակված:<br>4.2026 թվականի<br>ավարտին<br>վերապատրաստ-<br>վել է բարեվար-<br>քության<br>հարցերով<br>կազմակերպիչ-<br>ների առնվազն<br>80%-ը:<br>Վերապատրաս-<br>տումներն<br>իրականացվել են<br>առնվազն 6 (վեց)<br>ակադեմիական<br>ժամ տևողու-<br>թյամբ:<br>Վերապատ-<br>րաստումից հետո<br>իրականացված<br>գիտելիքների<br>ստուգման<br>արդյունքում<br>վերապատրաստ-<br>վածները | կիցների<br>շրջանում<br>կատար-<br>վող<br>հարցում-<br>ներ<br>Կիսամյա-<br>կային և<br>տարեկան<br>մոնիթո-<br>րինգային<br>հաշվե-<br>տվություն-<br>ներ<br>Մամուլի<br>հաղոր-<br>դագրու-<br>թյուններ<br>ԶԼՄ<br>հրապա-<br>րակումներ | (համա-<br>ձայնու-<br>թյամբ) | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ցուցաբերել են առնվազն 90% իմացություն: | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.4.**<br><br>Բարելավել էթիկայի հանձնաժողովների գործունեությունը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Մշակվել են անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում:<br>2. Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ օրենսդրական փոփոխությունները պետական և համայնքային առանձին տեսակները կարգավորող օրենքներում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և | Իրավական ակտի առկայություն<br><br>Վերապատրաստումների զեկույցներ<br><br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) | Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br><br>(համաձայնությամբ) |
| | Պետական ծառայության առանձին տեսակների, ինչպես նաև համայնքային ծառայության համար, պատգամավորների համար չկան մշտական էթիկայի հանձնաժողովներ, ըստ անհրաժեշտության ձևավորվում են ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց ձևավորումը և գործունեությունը լիարժեք | II | I | II | | | | | | |
| | | | 1. Գույքագրվել են հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովների գործառույթների իրականացման խոչընդոտները:<br><br>2. Օրենսդրորեն նախատեսվել է պատգամավորների էթիկայի հարցերով հանձնաժողովի ձևավորումը և գործունեության կարգը: | 1. Ուսումնասիրվել են պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության էթիկայի հանձնաժողովների ձևավորման հնարավորությունը և գործունեության երաշխիքները:<br><br>2. Անհրաժեշտության դեպքում օրենսդրական | 1. Էթիկայի հանձնաժողովների գործառույթների պատշաճ իրականացման համար ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ են մշակվել: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | երաշխավորված չէ: | | | փոփոխությունների փաթեթը հաստատվել է Կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի ընդունմանը: | | | ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>3. Մշակվել և Էթիկայի հանձնաժողովների կողմից կիրառվում են ուղեցույցներ և մեթոդական ձեռնարկներ: | հարցում-ներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղոր-դագրու-թյուններ<br><br>ԶԼՄ հրապա-րակումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.5.**<br><br>Բարելավել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատա-րող մարմին | Համակա-տարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | Ուղեցույցի և միասնա-կան մեթոդա- | | |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| վարման թվային կառուցակարգեր | Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարման մեթոդական կառուցակարգերը բացակայում են:<br>Վիճակագրության վարումը կրում է չկանոնակարգված բնույթ: Արդյունքում, մի շարք հարցերով բացակայում են վիճակագրական տվյալները, ինչպես, օրինակ՝ էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեությանը վերաբերող հարցերը: | | Մշակել կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույց: | | | Մշակված մեթոդաբանության և ուղեցույցի վերաբերյալ մասնագիտական պատրաստումներ կազմակերպել, դրանք ներկայացնել համապատասխան մարմիններին՝ վերապատրաստման նյութերի մեջ ներառելու համար: | Մշակվել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում թվային վիճակագրության վարման մեթոդաբանություն և ուղեցույցներ: | բանության առկայություն:<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br>Մամուլի հաղորդագրություններ<br>ԶԼՄ հրապարակումներ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.6.**<br>Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |

| առկա գործիքակազմը | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | II | I | II | | | | | | |
| | Առկա գործի-քակազմը որոշակի դեպքերում ամբողջությամբ հնարավորություն չի տալիս թեկնա-ծուների բարեվարքության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու և վերջնական գնահատական ձևավորելու, ինչն էլ գնահատող մարմնի համար նշանակման գործընթացում որոշակի խոչընդոտներ է առաջացնում: Վերջնական գնահատական ձևավորելու հարցում Հանձնաժողովի համար մեծամասամբ խոչընդոտ են հանդիսանում ստորև ներկայացված տվյալների | | 1. Մշակվել և հաստատվել է թվայնացման հայեցակարգը:<br>2. Հայեցա-կարգի հիման վրա իրակա-նացվել է տեխնի-կական աջակցու-թյան գնահա-տում, դոնորների հետ համագործակ-ցություն և համաձայնեցված իրականացման ապահովում: | 1. Արդիակա-նացվել են գործող էլեկտրոնային գործիքակազ-մերը՝ իրականացվել է՝<br>1.1. Հայտարա-րագրման նոր էլեկտրոնային համակարգի խնդիրների շտկում<br>1.2. Հայտարա-րագրման նոր էլեկտրոնային համակարգի վերլուծական մոդուլի կառուցում<br>1.3. Նվերների հայտարարա-գրման մոդուլի կառուցում, ինտեգրում<br>1.4. Բարեվար-քության ուսումնասիրու-թյան մոդուլի կառուցում, ինտեգրում<br>1.5. Կուսակցու-թյունների ֆինանսական վերահսկողու-թյան, ներառյալ նախընտրական | 1. Ապահովվել է ԿԿՀ-ի և այլ պետական մարմինների, մասնավորա-պես Հակակոռուպ-ցիոն կոմիտեի և ԳԴ-ի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավման վարչության, Քննչական կոմիտեի միջև համակարգերի ինտեգրացիա և փոխգործակ-ցելիությունը: Ստեղծվել է բարեվար-քության ուսումնասի-րության առանձին էլեկտրոնային հարթակ, որը հնարավորու-թյուն կտա ինքնաշխատ եղանակով տվյալների ներբեռնման, արժանահա- | | 1. Մշակվել է թվայ-նացման հայեցա-կարգ:<br><br>2. Կատարելագործ-ված և արդիա-կանացված են գործող էլեկտրո-նային գործիքա-կազմերը կամ ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր:<br><br>3. Ապահովված է էլեկտրոնային համակարգերի փոխգործակցե-լիությունը: | Հայեցա-կարգ<br><br>Գործարկ-վող էլեկտրո-նային գործիքներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղոր-դագրու-թյուններ<br><br>ԶԼՄ հրապա-րակումներ | Կոռուպ-ցիայի կան-խարգել-ման հանձ-նաժողով<br><br>(համա-ձայնու-թյամբ) | Արդարա-դատության նախարա-րություն<br><br>Բարձր տեխնոլո-գիական արդյունա-բերության նախարա-րություն<br><br>Գլխավոր դատախա-զություն<br><br>(համաձայ-նությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե<br><br>(համաձայ-նությամբ)<br><br>Հակակո-ռուպցիոն կոմիտե<br><br>(համաձայ-նությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բացակայությունը կամ դրանց արժանահավատության ստուգման գործիքակազմի անարդյունավետ կիրառելիությունը.<br>ա) բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների.<br>բ) թեկնածուների հետ համատեղ բնակվող ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց վերաբերյալ տեղեկատվության. | | | քարոզչության ժամանակահատվածը, մոդուլի կառուցում, ինտեգրում: | վատության ստուգման, եզրակացության նախագծի կազմման, ինչպես նաև արհեստական բանականության միջոցով ներդրված պրակտիկային համապատասխան բարեվարքության գնահատականի նախագծի ձևավորում: | | | | | Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | **ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 1.7.**<br><br>Երաշխավորել իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |

| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| փորձաքննությունը՝ մշակվող ակտերի (ex ante) և անհրաժեշտության դեպքում՝ դրանց հիմքում ընկած կամ դրանց հետ փոխկապակցված իրավական ակտերի (ex post) փորձաքննությունը | Ներկայումս իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը երաշխավորված չէ: Ավելին, առկա չէ իրավական ակտերի ex post փորձաքննության հնարավորություն: | II | I<br>1.Ուսումնասիրվել է իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության լավագույն մոդելի վերաբերյալ միջազգային փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ: | II<br>1.Միջազգային փորձի հաշվառմամբ ընտրվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննության կիրառելի մոդելը:<br>2.Սահմանվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն իրականացնող լիազոր մարմինը՝ գործադիրի կառուցակարգում:<br>3.Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը: | | | 1.Օրենսդրական փոփոխությունները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br>2.Իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմինը գործում է: | Իրավական ակտի առկայություն<br>Ձևավորված մարմին/ ստորաբաժանում | ՀՀ արդարադատության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br>(համաձայնությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 4.Սահմանվել է փորձաքննության իրականացման մեթոդաբանությունը գործադիր/ԿԿՀ համագործակցությամբ:<br><br>5.Զարգացվել է իրավական ակտերի նախագծերի փորձաքննության լիազոր մարմնի կարողությունները: | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | | **ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 1.8.**<br><br>Միասնականացնել կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող օրենսդրությունը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | «Կոռուպցիայի կանխարգելման | Իրավական ակտի | Կոռուպցիայի կանխարգել- | Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բարեվարքության համակարգի տարրերը համընդհանուր ձևով կարգավորող միասնական օրենսդրական ակտ առկա չէ: Նման պայմաններում, շատ հաճախ ապահովված չէ տարբեր օրենքներում կարգավորումների միասնական մոտեցումը: | | | 1. Մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» վերտառությամբ օրենքի նախագիծ, որով ամբողջականացվել են բարեվարքության համակարգի տարրերի՝ շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների միասնական կիրառման և կառավարման, կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող այլ կառուցակարգերի օրենսդրական կարգավորումները: | Օրենքի և հարակից իրավական ակտերի նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | | մասին» օրենքի և հարակից այլ ակտերում փոփոխությունների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ՔԼՄ հրապարակումներ | ման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.9.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում | | | | | | | որակական ցուցանիշներ | | | |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br>2. Ընտրվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման լավագույն մոդելը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Պետական կառավարման համակարգի մարմիններ |
| | Կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդնումն ուղղված է հակակոռուպցիոն ոլորտի զարգացման, կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման միասնական քաղաքականության մշակմանը, այնպիսի կառուցակարգերի կիրառմանը, որոնք կառավարելի կդարձնեն կոռուպցիոն ռիսկերի առաջացումը, բարեվարք միջավայր կստեղծեն ողջ հանրային կառավարման համակարգում: Մինչդեռ, նման համակարգը | II | I | II | | | | | | |
| | | | Մշակել օրենսդրական նախագիծ՝ պետական և ՏԻՄ-երի համար սահմանելով կոռուպցիոն ռիսկերի գնահատումների հիման վրա կոռուպցիոն ռիսկերի մեղմացմանը, այդ թվում՝ բարեվարքության մեղմացմանն ուղղված ոլորտային գործողությունների մշակման (առողջացման ծրագիր) գործառույթ՝ նախատեսելով ԿԿՀ-ի հետ համագործակցության մեխանիզմներ: | Մշակել օրենսդրական նախագիծ՝ ԿԿՀ-ին վերապահելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման, դրանց զսպմանն ուղղված միջոցառումների իրականացումը, այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունների մշակման և հաստատման, արտաքին | Նախագծերը Կառավարության կողմից հավանության են արժանացել և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | դեռևս առկա չէ ՀՀ-ում: | | | ընտրանքային գնահատման մեթոդական և մասնագիտա-կան աջակ-ցության, կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա պետական և տեղական ինքնակառա-վարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի զսպման (առողջացման) ծրագրերի մշակմանն ու իրականացմանը աջակցության գործառույթները: | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1.10.**<br><br>Ընդլայնել հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համա-կատա-րող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | | II | I | II | | | 1. Օրենսդրական փոփոխությունները | Իրավական ակտի | ՀՀ արդա-րադա- | Կոռուպ-ցիայի |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը ներառում է պետական և տեղական ինքնա-կառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց, ինչի արդյունքում չի ապահովվում պետական և համայնքների մասնակցությամբ կազմակերպություն-ների՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հաշվետվո-ղականությունն ու թափանցիկությունը:<br><br>«Հանրային ծառայության մասին» օրենքով հայտարարատու որոշ պաշտոնների համար սահմանված չէ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: | | | 1.Օրենսդրական փոփոխությունների միջոցով ընդլայնվել է հայտարարա-գրման պարտակա-նություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը՝ ներառելով՝<br><br>1) պետական և համայնքային կազմակերպու-թյունների՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ ըստ այդմ սահմանելով սույն խմբի համար ֆինանսատնտե-սական չափանիշներ և վերանայելով իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու կարգավորումները.<br><br>2) այլ ռիսկային պաշտոններ ստանձնող անձանց:<br><br>2.Օրենսդրական փոփոխությունների միջոցով հայտարարատու բոլոր պաշտոնատար անձանց համար սահմանվել է շահերի հայտա- | Նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավա-րությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել: | | «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավա-րության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | տության նախարա-րություն | կան-խարգել-ման հանձնա-ժողով<br><br>(համա-ձայնու-թյամբ)<br><br>ՀՀ տարած-քային կառա-վարման և ենթա-կառուց-վածք-ների նախա-րարու-թյուն |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բարագիր ներկայացնելու պարտականություն: | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.11.**<br><br>Զարգացնել հայտարարագրման էլեկտրոնային համակարգը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Ստեղծված և գործարկված համակարգն իր ֆունկցիոնալությամբ դեռևս չի ապահովում պետական բոլոր շտեմարանների հետ փոխգործելիությունը (շտեմարաններում առկա որոշ տվյալներ չեն համապատասխանում համակարգի որակական պահանջներին), ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային տվյալների ընտրանքային որոնումը, մեքենայական ընթեռնելի | II | I | II | | | 1. Հայտարարագրման էլեկտրոնային համակարգի զարգացման համար տեխնիկական լուծումները ապահովված են:<br>2. Ապահովվել է ԿԿՀ և այլ մարմինների էլեկտրոնային համակարգերի, շտեմարանների փոխգործելիությունը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>Պետական եկամուտների կոմիտե<br><br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության |
| | | | | | 1.Ապահովվել է հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգի շարունակական կատարելագործումը, հայտարարագրերի վերլուծության գործընթացն ավտոմատացնելու միջոցով զերծ պահել մարդկային գործոնով պայմանավորված ընտրողական մոտեցումներից, ապահովել հայտարարագրերի լրացման | 1. Համընդհանուր հայտարարագրման ներդրման շրջանակներում ինքնաշխատ եղանակով ապահովվել է ՊԵԿ-ի և ԿԿՀ-ի էլեկտրոնային համակարգերում նույնական տվյալների փոխանակումը: Պետական մարմինների շտեմարաններում առկա տվյալները համապատասխանեցնել հայտարարագրման ենթակա տվյալներին: Հայտարարա- | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տվյալների արտահանումը ինքնաշխատ եղանակով: Ներկայումս ապահովված չէ էլեկտրոնային ինքնաշխատ ծանուցումների համակարգը, միաժամանակ առկա չէ դրա վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ: | | | | նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու բոլոր դեպքերի ինքնաշխատ եղանակով արտացոլումը, ռիսկային ցուցիչների հիման վրա կարմիր դրոշակների հայտնաբերումն ու հայտարարագրերի հնարավորինս ամբողջական ինքնաշխատ վերլուծությունը, կոռուպցիոն ռիսկերի առկայության և ապօրինի հարստացման կասկածելի գործարքների վերաբերյալ գործերի փոխանցումը ՀՀ գլխավոր դատախազությանը, | գրման ենթակա, սակայն շտեմարաններում բացակայող տվյալներն ինտեգրել շտեմարաններում:<br>2. Ինքնաշխատ ծանուցումների միջոցով նվազեցվել է օրենքով սահմանված ժամկետներում չներկայացրած հայտարարագրերի թվաքանակը: | | | | նախարարություն |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2.ապահովվել է պետական բոլոր շտեմարանների հետ փոխգործելիությունը, ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային տվյալների ընտրանքային որոնումը, մեքենայական ընթեռնելի տվյալների արտահանումը ինքնաշխատ եղանակով: Ինքնաշխատ եղանակով ապահովվել հայտարարատու պաշտոն ստանձնելու դեպքում անձի տվյալների փոխանցումն ու գրանցումը հայտարարագրման էլեկտրոնային համակարգում: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1.12.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդլայնել բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Բարեվարքության ուսումնասիրությունը թեև ընդգրկում է ներկայումս այն սահմանափակված է որոշակի հանրային պաշտոններ զբաղեցնելու համար բարեվարքության ուսումնասիրությամբ: Այս առումով օրենսդրորեն ամրագրված չէ լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության ուսումնասիրության պարտադիր պահանջ: Նշվածը նաև կարևորվում է ինչպես միջազգային կազմակերպություններ, օրինակ՝ ԳՐԵԿՈ-ի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում, այնպես էլ ներպետական սոցիալական հարցումների արդյունքներով վերհանված | II | I | II | | | 1. Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից այլ ակտերում փաթեթը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձինք ենթարկվել են բարեվարքության ուսումնասիրության: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br><br>(համաձայնությամբ |
| | | | | | Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով կընդլայնվի բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը՝ ըստ ԳՐԵԿՈ 5-րդ փուլի գնահատման շրջանակում նախատեսված PTEF-ների շրջանակի: | Նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ռիսկային պաշտոն-<br>ների և գործընթաց-<br>ների համա-<br>տեքստում: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.13.**<br><br>Տարանջատել բարեվարքության ուսումնասիրությունը հանրային պաշտոնում նշանակման կամ առաջխաղացման համար և ընթացիկ բարեվարքության ուսումնասիրությունը (շրջանակը, մեխանիզմները) | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառա-վարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br>2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք անցնում են ընթացիկ բարեվարքության ուսումնասիրություններ: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | ՀՀ արդա-րադա-տության նախարա-րություն | Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համաձայ-նությամբ) |
| | Բարեվարքության ուսումնասիրու-թյունը ներկայումս իրականացվում է պաշտոնի նշանակման կամ առաջխաղացման համար, արդյունքում չի երաշխավորվում ընթացիկ բարեվարքության ուսումնասիրություն ները: | II | I | II | | | | | | |
| | | | 1. Վերանայվել են այն հանրային պաշտոնները, որոնցով բարեվար-քության ուսումնասի-րությունը վերապահված չէ ԿԿՀ-ին, համապա-տասխան մարմնում իրականաց-նելու կառուցա-կարգը:<br><br>2. Ընտրվել է պետական մարմիննե-րում, ՏԻՄ- | 1. Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր՝ հստակեցնելով ընթացիկ բարեվարքության ուսումնասիրության շրջանակը, ստուգող մարմինները, ինչպես նաև իրականացման մեխանիզմները: | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երում և պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության ուսումնասիրության ստուգման պատշաճ և գործող կառուցակարգեր: | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.14.**<br><br>Բարձրացնել ԿԿՀ կողմից բարեվարքության վերաբերյալ եզրակացությունների հիման վրա նշանակում իրականացնող մարմնի հաշվետվողականությունը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Նշանակումներ կատարելիս ԿԿՀ եզրակացությունները հաշվի չառնելու դեպքում | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ արդարադատության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) |
| | Ներկայումս պաշտոնում նշանակումը կամ առաջխաղացումն իրականացվում է անկախ ԿԿՀ բարեվարքության վերաբերյալ եզրակացության դրական կամ բացասական լինելուց: Հստակ չէ, թե ինչ չափանիշների հիման վրա է գնահատվում ԿԿՀ եզրակացությունը | II | I | II | | | | | | |
| | | | Հետազոտվել է բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ | 1. Բարեվարքության ուսումնասիրության չափորոշիչների միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ մշակվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց համաձայն՝ | | Իրականացվել է մոնիթորինգ ԿԿՀ եզրակացությունների հիման վրա նշանակում կատարող մարմիններում: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անձին պաշտոնի նշանակելիս: | | (համապատասխանաբար պաշտոնի նշանակման, առաջխաղացման, ընթացիկ և լիազորությունների լայն շրջանակ ունեցող և ինքնուրույն որոշումների կայացման իրավասություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստուգումների համար): | թափուր հաստիքների համալրման մրցութային և առաջխաղացման գործընթացներում թեկնածուների բարեվարքությունը ստուգելու համար կիրառվում են գրավոր/բանավոր առաջադրանքներ, ներդնել հանրային պաշտոնը ստանձնելու կամ առաջխաղացման համար թեկնածուների բարեվարքության գնահատման չափորոշիչներ,<br><br>ԿԿՀ-ի կողմից թեկնածուի բարեվարքության բացասական եզրակացության պարագայում, նրա՝ համապատասխան պաշտոնի նշանակումը կամ առաջխաղացումն իրականացվում է պատճառաբանված որոշման հիման վրա:<br><br>2.Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության | | | տրվում է պատճառաբանություն: | Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կողմից և ներկա-յացվել են ԱԺ-ի ընդունմանը | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.15.**<br><br>Սահմանել ԿԿՀ բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասի հրապարակայնության պահանջ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխար-գելման հանձնաժողովի մասին» օրենքում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները հրապա-րակվում են ԿԿՀ կայքում: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | ՀՀ արդա-րադա-տության նախարա-րություն | Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համաձայ-նությամբ) |
| | Բարեվարքության վերաբերյալ ուսում-նասիրությունների արդյունքների հրապարակային չլինելը հնարավորություն չի տալիս հանրային վերահսկողության մեխանիզմների միջոցով ևս ամրապնդել բարեվարքության համակարգը: | II | I | II | | | | | | |
| | | | Հետազոտվել է Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողովի կողմից կազմված բարեվար-քության վերաբերյալ եզրակացու-թյան եզրափակիչ մասը հրապարա-կային դարձնելու անհրաժեշ-տությունը,<br><br>բարեվար-քության | 1.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կազմված բարեվարքության վերաբերյալ եզրակացության եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու անհրաժեշտության ուսումնասիրության արդյունքների հիման վրա և անհրաժեշտության դեպքում՝ մշակվել են օրենսդրական փոփոխություններ:<br><br>2.Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ուսումնասի-րության չափորոշիչ-ների միջազգային լավագույն փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ | կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.16.**<br><br>Ամրապնդել բարեվարքության ուսումնասիրության համակարգի արդյունավետությունը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Բարեվարքության ուսումնասիրություն իրականացնելիս ԿԿՀ ռեսուրսները սահմանափակ են, ինչը նվազեցնում է ուսումնասիրության արդյունավետու-թյունը: | II | I | II | | | 1. Օրենսդրական փոփոխությունները «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Ստեղծվել է բարեվարքության ուսումնասիրության առանձին էլեկտրոնային հարթակ: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ | Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համա-ձայնու-թյամբ) | Բարձր տեխնոլո-գիական արդյունա-բերության նախարա-րություն<br><br>ՀՀ արդա-րադատու-թյան նախարա-րություն |
| | | | Մշակվել են օրենսդրա-կան փոփո-խության նախագծեր, որոնցով նախատես-վում է բարեվար-քության ուսումնասի-րության առանձին էլեկտրոնային հարթակ, դրա կիրառման կարգ, ինչպես նաև | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | 1. Ստեղծ-վել է բարեվար-քության ուսումնասիրու-թյան առանձին էլեկտրոնային հարթակ, որը հնարավորություն կտա ինքնաշխատ եղանակով տվյալների ներբեռնման, արժանահավա-տության ստուգման, եզրակացության նախագծի | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կարգավոր-վում է բարեվարքու-թյան ուսում-նասիրության ընթացքում թվային այլ գործիքների կիրառման դեպքերն ու մանրամաս-ները: | | կազմման, ինչպես նաև արհեստական բանականության միջոցով ներդրված պրակտիկային համապատաս-խան բարեվարքության գնահատականի նախագծի ձևավորում: 2. Երաշխավորվել ԿԿՀ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ թվայնացման միջոցով ֆիլտրելով այն թեկնածուներին, ում բարեվարքության հարցաթերթիկ-ները պետք է ստուգվեն: | | | ԶԼՄ հրապարա-կումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1.17.** Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունները | Իրավական ակտի | ՀՀ արդա-րադա-տության | Կոռուպ-ցիայի կանխար-գելման |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունը | Ներկայումս բացակայում են կուսակցությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողության, կուսակցություններին կատարվող նվիրատվություններին, դրանց սահմանաչափերին, վարչական և քրեական պատասխանատվության առնչվող դրույթներին, պետական գրառման ենթակա տվյալների՝ պատշաճ գրանցումն ապահովելու համար օրենսդրական կարգավորումներին այդ գործառույթներն ամբողջությամբ իրականացնելու համար անհրաժեշտ կառուցակարգերը (ընթացիկ ստուգման եղանակները, համագործակցությունը այլ մարմինների հետ) և ներուժը: | | | Մշակվել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնցով նախատեսվում են ԿԿՀ-ի և ԿԸՀ-ի, ԿԿՀ-ի և Հակակոռուպցիոն կոմիտեի միջև համագործակցության եղանակները և կարգը, ԿԿՀ-ի կողմից կուսակցությունների ընթացիկ ֆինանսական վերահսկողության գործիքները և կարգը, ինչպես նաև կարգավորվում են ԿԿՀ գործառույթի պատշաճ իրականացման համար այլ հարցերը: | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | | «Կուսակցությունների մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, Ընտրական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | առկայություն<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br>Մամուլի հաղորդագրություններ<br>ԶԼՄ հրապարակումներ | նախարարություն | հանձնաժողով (համաձայնությամբ)<br>Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ)<br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | **ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ** | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 1.18.**<br><br>Կատարելագործել վարքագծի կանոնագրքերը՝ հիմք ընդունելով ԿԿՀ հաստատած տիպային կանոնները, և դրանց կիրարկման կառուցակարգերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում: | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունները «Հանրային ծառայության մասին» օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում և հարակից այլ ակտերում հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համա-ձայնու-թյամբ) | Տարածքա-յին կառավար-ման նախարա-րություն<br><br>ՀՀ արդա-րադատու-թյան նախարա-րություն<br><br>Վարչա-պետի աշխատա-կազմի քաղաքա-ցիական ծառայու-թյան գրասենյակ<br><br>(համաձայ-նությամբ |
| | Ներկայումս վարքագծի կանոնները որոշ պետական և համայնքային պաշտոնների դեպքում առկա չեն, եղած վարքագծի նորմերը միասնական չեն, ինչպես նաև հաճախ բացակայում է նշված կանոնների նկատմամբ պատշաճ հսկողությունը: | II | I | II | | | | | | |
| | | | Մշակվել են օրենսդրա-կան փոփոխու-թյուններ՝ ապահովելով պետական և տեղական ինքնակառավ արման համակար-գում, պետական մասնակցու-թյամբ կազմակեր-պություննե-րում վարքագծի միասնական կանոնների կիրառումը և դրանց խախտման հիմքով պատաս-խանատվու-թյան միասնական | Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, համայնքային ծառայողների ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակման հաստատման և փուլ առ փուլ կիրարկման միջոցով ապահովվել է դրանց համապատասխան ությունը հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին: Մասնավորապես, սահմանվել է 1.1. հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | միջոցների կիրառումը:<br><br>Նախագծերը հավանության են արժա-նացել ՀՀ կառավարու-թյան կողմից և ներկայաց-վել են ԱԺ-ի ընդունմանը | կիրարկման վերաբերյալ ուղեցույց,<br>1.2. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների և կանոնների մեկնաբանություն-ներ,<br>1.3. պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալ-ների, Երևան համայնքի վարչա-կան շրջանների ղեկավարների, նրանց տեղակալ-ների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը պատգամավորների վարքագծի կանոնագիրք,<br>1.4. դատավորների և դատախազների | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գործող վարքագծի (էթիկայի) կանոն-ները միասնակա-նացնել հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոն-ներին՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատ-կությունները,<br>1.5. սահմանել համայնքի ավագանու վարչական շրջանի ղեկավարների և համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները,<br>1.6. համայնքի ավագանու, վարչական շրջանի ղեկավարի, համայնքային հայե-ցողական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքերի մշակման օրենսդրական կանոնակարգում-ները հաստատող պատասխանատու լիազոր մարմիններին,<br>1.7. հանրային (պետական և համայնքային) | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծառայողների ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված վարքագծի կանոնագրքերը, համայնքային ծառայողների վարքագծի կանոնագրքերի հաստատման և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին և վերջիններիս գործառույթների շրջանակը։ | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1. 19.**<br><br>Երաշխավորել շահերի բախման նոր սահմանման իրացումը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունների և այլ անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը։ | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման | ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածք- |
| | Շահերի բախման սահմանումը փոփոխվել է, սակայն դրանից բխող փոփոխություններ չեն կատարվել այլ օրենքներում։ | II | I | II | | | | | | |
| | | | Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ շահերի բախման նոր | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | սահմանումից բխող՝ դատավորների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված կարգավորումները կանոնակարգելով համապատասխան ոլորտային օրենքներով: | ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | | | | հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ՉԼՄ հրապարակումներ | հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) | ների նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br><br>(համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.20.**<br><br>Զարգացնել նվերների ընդունման սահմանափակումների | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Օրենսդրական փոփոխությունների | Իրավական ակտի | ՀՀ արդարադատության | |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրացման կառուցակարգերը | Հանրային ծառա-յողների և հանրա-յին պաշտոն զբա-ղեցնող անձանց ստացած և պետու-թյան սեփականու-թյունը հանդիսացող նվերների տնօրին-ման կառուցակար-գեր նախատեսված չեն, դեռևս թերի են նվերների հաշվառ-ման կառուցակար-գերը, դեռևս ձևավորված չէ նվերների ռեեստրը | Մշակվել, Կառա-վարության հավանու-թյանն է արժանացել և ԱԺ-ի ընդունմանն է ներկայացվել օրենքի նախագծերի փաթեթ, որոնցով.<br><br>1. Նախատես-վել են պետության սեփականու-թյունը դարձող նվերների տնօրինման կանխատե-սելի, հստակ և արդյունավետ կարգավորում ներ,<br>2. Արարողա-կարգային նվերները հաշվառելու և տնօրինելու եղանակի վերաբերյալ եզրակացու-թյուն ներկայաց-նելու լիազո-րությունն առանձին դեպքերում վերապահվել է Պետական արարողա- | Ընդունվել են հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ստացած և պետության սեփականու-թյունը հանդիսացող նվերների տնօրինման կառուցա-կարգերի կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենս-դրական ակտերը: | 1. Իրականացվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված նվերների հաշվառման ռեեստրի ստեղծման և դրա հետ փոխկա-պակցված մյուս գործողությունները: | | | փաթեթը՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում, «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, հավանության է արժանացել ՀՀ կառա-վարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Կառավարության որոշումներով սահմանվել են պետական սեփա-կանություն դարձած նվերների տնօրինման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնա-հատկությունները, տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, տնօրինման եղանակի վերաբերյալ եզրակացության տրամադրման կարգը:<br><br>3. Ձևավորվել և գործարկվել է նվերների ռեեստրը: | առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ՁԼՄ հրապարա-կումներ | նախարա-րություն<br><br>Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համա-ձայնու-թյամբ) | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կարգային ծառայությանը, 3. Սահմանվել է պետական սեփականու-թյուն դարձող արարողակար գային նվեր-ները տվյալ պետական մարմնում պահելու օգտագործելու հնարավորու-թյուն, 4. Մշակու-թային արժեք ներկայացնող արարողա-կարգային նվերները թույլատրվել է հանձնել թանգարան-ներին կամ Ազգային գրադարան, 5. Հստակեց-վել են առանձին տեսակի արարողա-կարգային նվերների (շուտ փչացող գույք, կենդանիներ և այլն) տնօրինման եղանակները, Սահմանվելու է արարողա-կարգային | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նվերներն ըստ անհրաժեշտության իրացնելու և հասույթը բարեգործության ուղղելու հնարավորություն,<br>6. Օրենքով սահմանված դեպքերում որպես պարգևատրում տրվող թանկարժեք նվերներն ու զենքը ներառվել են թույլատրելի նվերների շրջանակում,<br>7. Նախատեսվել են ոչ թույլատրելի նվերները Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից իրացնելու և ստացված հասույթի տնօրինման եղանակները: | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1.21.** | Ելակետային տվյալներ | Կատարողական թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Զարգացնել անհամատեղելիության պահանջների բացահայտման և վերահսկողության գործիքները | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժա-նացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համա-ձայնու-թյամբ) | ՀՀ արդա-րադատու-թյան նախարա-րություն<br><br>Քաղաքա-ցիական հասարա-կության կազմակեր-պություններ<br><br>(համաձայ-նությամբ)<br><br>Վարչա-պետի աշխատա-կազմի քաղաքա-ցիական ծառայու-թյան գրասենյակ<br><br>(համաձայ-նությամբ) |
| | Ուսումնասիրված չեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, (հատկապես քաղաքական պաշտոնյաների) և հանրային ծառայողների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) գիտական, կրթական գործունեության և ստեղծագործական աշխատանքի, այլ ոլորտներում աշխատանքի թույլատրելի շրջանակները: | II | I | II | | | | | | |
| | | | Միջազգային փորձի հիման վրա ներդնել՝<br>1. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, (հատկապես քաղաքական պաշտոնյա-ների) և հանրային ծառայողների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) խմբի ծառա-յողների կողմից ոչ առևտրային կազմակեր-պություննե-րում կար-գադրիչ կամ կառավար-ման գործա-ռույթներով օժտված պաշտոնների զբաղեցումը, ինչպես նաև գիտական, | 1. Միջազ-գային փորձի հիման վրա դիտարկել առողջապահու-թյան, սպորտի և լրագրության, ինչպես նաև հումանիտար այլ ոլորտներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու կամ համատեղությամբ աշխատելու դրույթները և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացման կառուցակարգեր սահմանելը:<br><br>2. Ուսումնասիրվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային | 1. Մշակվել են իրավական ակտերի նախագծերը, հաստատվել են ՀՀ կառավա-րության կողմից և ներկայացվել ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Էլեկտրոնային ռեեստրների փոխգործելիու-թյան արդյուն-քում, բարե-լավվել են պետական պաշտոն զբաղեցնող անձանց որևէ մասնավոր կազմա-կերպության հնարավոր/ իրական մասնակցության վերաբերյալ տեղեկատվու-թյան ստացումը: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կրթական և ստեղծա-գործական գործունեու-թյուն իրակա-նացնող առևտրային և ոչ առևտրա-յին կազ-մակեր-պություննե-րում լրիվ հաստիքով վարձատրու-թյուն ստանալը սահմանա-փակման մեխանիզմ-ները:<br><br>2. Հստակեց-նել գիտա-կան, կրթա-կան գործու-նեության և ստեղծագործ ական աշխա-տանքի շրջանակ-ները՝ ըստ գիտական, կրթական կազմակեր-պությունների և ստեղծա-գործական աշխատանքի ոլորտների՝ սահմանելով նշված գործունեու- | ծառայողների կողմից գույքի հավատարմագրա-յին կառավարման հանձնելու վերաբերյալ միջազգային փորձը՝ ներպետական կարիքների հաշվառմամբ (հնարավոր տարբերակներ՝ ներկա կառուցակարգերի բարելավում կամ նոր կառուցակարգերի ներդրման դիտարկում)<br><br>3"Ուսումնասիրու-թյան արդյունքում ներկա կառուցա-կարգի պահպան-ման դեպքում օրենսդրությամբ սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հան-րային ծառայող-ների կողմից գույքի հավատարմագրա-յին կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր և վարման կարգ: | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թյանը համապատասխանող կազմակերպությունների ու գործունեության տեսակների ցանկերը: | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.22.**<br><br>Օրենսդրությամբ հստակեցնել «այլ սահմանափակումների» պահանջները | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br><br>Վարչապետի աշխատակազմի | Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ<br>(համաձայնությամբ) |
| | Հանրային ծառայության առանձին ոլորտներում այլ սահմանափակումները հստակեցված կամ մանրամասն կարգավորված չեն: | II | I | II | | | | | | |
| | | | | | 1. Մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով հանրային ծառայության առանձին ոլորտների համար սահմանվել են «այլ սահմանափակումների» կոնկրետ ոլորտային առանձնահատկություններ:<br><br>2. Օրենսդրությամբ «այլ սահմանափակումներ»-ի յուրաքանչյուր | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | տեսակի համար նախատեսել առանձին հոդված, որով սահմանել հան-րային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կոնկրետ սահմա-նափակման շրջանակը, կիրառման պահանջները և պայմանները, դրանք կիրառող պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակը, պահպանման նկատմամբ վերահսկողու-թյան գործիք-ները և կառուցա-կարգերը:<br><br>3. Օրենսդրորեն նախատեսել հետաշխատան-քային սահմանափա-կումների խախտմամբ կնքված աշխատանքային կամ այլ պայմա-նագրերի անվավեր ճանա-չելուն ուղղված մեխանիզմներ: | | | ԶԼՄ հրապարա-կումներ | քաղա-քացիա-կան ծառայու-թյան գրա-սենյակ<br><br>(համա-ձայնու-թյամբ | |

| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 1.23.**<br><br>Ներդնել լոբբիստական գործունեության (ոչ իրավաչափ ազդեցության) վերաբերյալ կարգավորումներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ<br><br>(համաձայնությամբ) |
| | Ներկայումս լոբբիստական գործունեության վերաբերյալ կարգավորումներ առկա չեն: | II | I | II | | | | | | |
| | | | Հիմք ընդունելով ՀՀ միջազգային պարտավորությունները ուսումնասիրվել է լոբբիստական գործունեության կարգավորումների միջազգային լավագույն փորձը: | Լավագույն միջազգային փորձի լույսի ներքո՝ մշակվել են լոբբիստական գործունեության թափանցիկության վերաբերյալ կարգավորումներ: | Տարբեր իրավական ակտերում ներառվել են լոբբիստական գործունեության վերաբերյալ կարգավորումներ, որոնցով կսահմանվեն օրենսդրական գործընթացի վրա ազդեցություն փնտրող լոբբիստների և այլ երրորդ կողմերի հետ շփումների կանոնները՝ ապահովելով վերջիններիս թափանցիկությունը: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1.24.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| Սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից նյութա-տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործման սահմանափակման անձնական նպատակներով օգտագործելը սահմանափակող դրույթներ | Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից նյութա-տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործման սահմանափակման կարգավորումները հստակեցված են: | II | I | II | | | Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br>(համաձայնությամբ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ<br>(համաձայնությամբ) |
| | | | | | 1. Մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով սահմանվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից նյութա-տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործման» սահմանափակման անձնական նպատակներով օգտագործելը սահմանափակող դրույթների | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | գործիքակազմերը, ընթացակարգերը ու վերահսկման կարգավորումները: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 1.25.**<br><br>Ներդնել բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | Ներկայումս առկա չէ բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգ: Տարբեր մարմիններում ձևավորվում է տարբերվող պրակտիկա: | II | I | II | | | | | | |
| | | | Գույքագրվել են բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվության գործող կառուցակարգերի առկա խնդիրները: | Գույքագրման հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնցով ներդրվել են հանրային ծառայության և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար բարեվարքության համակարգի տարրերի խախտման հիմքով պատասխանատվություն սահմանող համապարփակ կառուցակարգեր, | Նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավարությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներառյալ միասնական և հստակ պատասխանատվության սանկցիաները բոլոր սուբյեկտների համար: | | | | ԶԼՄ հրապարակումներ | (համաձայնությամբ) | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 1.26.**<br><br>Որոշակի պաշտոններ զբաղեցնող անձանց համար սահմանել պատասխանատվության միջոցների կիրառման պարտադիր պահանջ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների և շահերի բախման կանոնների խախտման համար օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվությունը կիրառելի չէ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ինչի արդյունքում նշված պաշտոնատար անձանց կողմից համապատասխան խախտման դեպքերը որևէ իրավական հետևանք չեն առաջացնում, | II | I | II | | | 1. Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Հանրային ծառայության մասին» օրենքում և այլ հարակից իրավական ակտերում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց համար ևս երաշխավորվել է կարգապահական պատասխանատվության կիրառումը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) | Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ<br><br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ ազգային անվտանգության ծառայություն |
| | | | | | Մշակվել են իրավական ակտի նախագծեր, որոնցով սահմանվել է՝<br>1. Քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով ԱԺ պատգամավորների, կառավարության անդամների, համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար համապատասխան ոլորտային օրենքներով սահմանել | Նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ուստի և չեն սահմանափակում որևէ կերպ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց զերծ մնալու նմանատիպ խախտումներից և պատասխանա-տվության բացակայության պայմաններում նման դեպքերը չեն կանխարգելվում: | | | | բարեվարքու-թյան համա-կարգի տարրերի խախտման հիմքով պատաս-խանատվության միջոցներ կիրա-ռելու պարտադիր պահանջ,<br>2. Վարչա-կան և հայեցո-ղական պաշտոն-ներ զբաղեցնող անձանց համար պատասխանատ վության միջոց-ների կիրառման պարտադիր պահանջ,<br>3. Հանրա-յին ծառայության առանձին ոլոր-տային օրենք-ներով (համայն-քային, դիվանա-գիտական, ոստիկանական, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում ծառայություն-ների մասին), ոլորտային առանձնահատ-կություններով պայմանավոր-ված՝ սահմանվել է պատասխա-նատվության միջոցների կիրառման | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | պարտադիր պահանջ: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| | |
|---|---|
| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ** | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | 1. Փոփոխված է Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը, կոմիտեի հաստիքները 80 %-ով համալրված են:<br>2. Կատարելագործված և արդիականացված են կոռուպցիայի հակազդման մարմիններում գործող էլեկտրոնային գործիքները և ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր:<br>3. Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում ներդրված են վերապատրաստման/պատրաստման ծրագրերը: 2025 թվականի ավարտին դատախազների առնվազն 60%-ը վերապատրաստվել է:<br>4. Մշակված են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ, ինչպես նաև հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցներ են մշակվել:<br>5. Մշակված է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ:<br>6. Տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են կոռուպցիայի հակազդման իրավապահ բոլոր մարմինների, ինչպես նաև հակակոռուպցիոն դատարանների աշխատանքներին:<br>7. Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 50 %-ը վերապատրաստվել է, իսկ մյուս դատարանների դատավորների առնվազն 80 %-ը վերապատրաստվել է կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաներով:<br>8. Կատարելագործած է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը, մշակված են և կիրառվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկան և ուղեցույցները, ընդլայնվել և արդիականացվել են նշված ոլորտում փոխօգնության մեխանիզմները:<br>9. Կատարելագործված և արդիականացված է ազդարարման համակարգը:<br>10. Ներդրված են ազդարարման վիճակագրության միասնական և պարտադիր կանոնները, ընդլայնվել է վիճակագրություն վարող սուբյեկտների շրջանակը, վիճակագրության մեջ արտացոլված են օրենսդրությամբ սահմանված հստակ և արժանահավատ տվյալներ:<br>11. Ներդրված են ազդարարման վարույթի օբյեկտիվությունը, հիմնավորվածությունը ապահովող, ազդարարների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ապահովող անհրաժեշտ կառուցակարգերը: |

| | |
|---|---|
| **ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ** | **· Ապահովվել է Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը, ինքնավարությունը և հաշվետվողականությունը:**<br>**· Երաշխավորվել է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության, ինչպես նաև կոռուպցիոն գործերի դատական քննության միասնական և կանխատեսելի քաղաքականության իրացումը:**<br>**· Շարունակաբար՝ ըստ տարիների բարելավվել են հակակոռուպցիոն հակազդման մարմինների, ինչպես նաև հակակոռուպցիոն դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը, պրոֆեսիոնալությունը, ինչպես նաև մասնագիտացվածությունը՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների:**<br>**· Շարունակաբար՝ բարձրացել է հանրային վստահությունը հակակոռուպցիոն հակազդման մարմինների, ինչպես նաև հակակոռուպցիոն դատարանների գործունեության նկատմամբ՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների:**<br>**● Շարունակաբար՝ ըստ տարիների, աճել է ազդարարման համակարգի նկատմամբ հանրային վստահությունը՝ ի համեմատություն 2022 թ. առկա տվյալների և ուսումնասիրությունների:**<br>**● 2026 թ. ավարտին առնվազն 25 %-ով աճել է ազդարարման հաղորդումների թիվը՝ ի համեմատություն 2022 թ. առկա տվյալների և ուսումնասիրությունների:** |

| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ** |
|---|---|

| **Գործողություն 2.1.**<br><br>Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը, իսկ ԱԺ-ի հանդեպ վերջինիս հաշվետվողակա-նությունը լրիվությամբ չի երաշխավորվում: Բացի այդ, Կոմիտեի նախագահի ընտրության | II | I | II | | | 1. Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում և հարակից իրավական ակտերում փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառա-վարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ | ՀՀ արդա-րադա-տության նախարա-րություն | Հակակո-ռուպցիոն կոմիտե (համաձայ-նությամբ) |
| | | | | Կատարել Հակակոռուպցիոն կոմիտեի անկա-խության երաշխիք-ների, մասնավո-րապես՝ Կոմիտեի նախագահի և վերջինիս տեղա-կալների նշանակ-ման կարգի փոփոխության | Մշակվել է «Հակա-կոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում, «Ազգային ժողովի կանո-նակարգ» սահմանադրա-կան օրենքում և այլ հարակից իրավական | Նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավա-րությանը և հավանության են արժանացել | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | գործընթացը չի ապահովում օբյեկտիվ և արդյունավետ ընտրություն:<br><br>Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին նշանակում է վարչապետը: | | | վերաբերյալ ուսումնասիրություն, որի արդյունքում կդիտարկվի նշյալ պաշտոնյաների նշանակման/ազատման կառուցակարգերի և անկախության երաշխիքների ամրապնդման հնարավորությունները, այդ թվում՝ Ազգային ժողովի: | ակտերում փոփոխություններ կատարելու նախագծերը, որոնցով կամրապնդվեն Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության երաշխիքները՝ վերջինիս ձևավորման կարգի վերանայման, այն է՝ Կոմիտեին նախագահի և վերջինիս տեղակալների նշանակման կարգի փոփոխությամբ: | | 2. Փոփոխվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորման կարգը և նոր նշանակումներն իրականացվել են համաձայն նոր կարգի: | Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | | |
| **Ֆինանսավորում** | | | | | | | | | | |
| **Գործողություն 2.2.**<br><br>Երաշխավորել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ հզորացումը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքները 80 %-ով համալրված են: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային | Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) | |
| | Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական ծառայության հաստիքները մասնակի են համալրված: | II | I | II | | | | | | |
| | | | Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների | Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների համալրման մրցույթները: | Կազմակերպվել և անցկացվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների | Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքները համալրվել են առնվազն 80 %-ով: | | | | |

<table>
<tr><td></td><td></td><td></td><td>համալրման մրցույթները:</td><td></td><td>համալրման մրցույթները:</td><td></td><td></td><td>հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ</td><td></td><td></td></tr>
<tr><td>Ֆինանսավորում</td><td colspan="10">Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ</td></tr>
<tr><td rowspan="4">Գործողություն 2.3.<br><br>Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատա-խազության հակա-կոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինակա-նության նկատմամբ հսկողության վարչու-թյան և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչության գործու-նեության թվայնաց-մանն ուղղված միջոցներ</td><td>Ելակետային տվյալներ</td><td colspan="5">Կատարողականի թիրախներ</td><td>Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ</td><td>Ստուգման միջոց</td><td>Կատարող մարմին</td><td>Համակատարող մարմին</td></tr>
<tr><td rowspan="3">Հակակոռուպցիոն կոմիտեի թվայնացման կարիքները գնահատված չեն: Առկա չեն ժամա-նակակից տեխնո-լոգիական՝ օպերատիվ-հետա-խուզական լուծում-ներ, ապահովված չէ քննչական հասանելիությունը այլ մարմինների շտեմարաններին:<br><br>Երաշխավորված չէ էլեկտրոնային</td><td>2023 թ.</td><td colspan="2">2024 թ.</td><td>2025 թ.</td><td>2026 թ.</td><td rowspan="3">1. Գնահատվել են թվայնացման կարիքները:<br><br>2. Կատարելագործված և արդիականացված են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր:<br><br>3. Ապահովված է էլեկտրոնային համա-կարգերի փոխգոր-ծակցելիությունը:</td><td rowspan="3">Գործարկ-վող էլեկտրո-նային գործիքներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ</td><td rowspan="3">Հակա-կոռուպ-ցիոն կոմիտե<br><br>(համա-ձայնու-թյամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատա-խազու-թյուն<br><br>(համա-ձայնու-թյամբ)</td><td rowspan="3">ՀՀ արդարա-դատության նախարարու-թյուն<br><br>Բարձր տեխնոլոգիա-կան արդյունաբե-րության նախարարու-թյուն</td></tr>
<tr><td>II</td><td>I</td><td>II</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>Գնահատ-ված են Հակակո-ռուպցիոն կոմիտեի, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախա-զության հակա-կոռուպցիոն կոմիտեում մինչդատա-կան</td><td>1. Գնահատված կարիքների Հայեցա-կարգի հիման վրա իրականացվել է տեխ-նիկական աջակցության գնահատում, դոնորների հետ համագործակցու-թյուն և համաձայնեցված իրականացման ապահովում:<br><br>2. Արդիականացվել են գործող էլեկտրոնային գործիքակազմերը:</td></tr>
</table>

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | համակարգերի փոխգործակցելիու-թյունը այլ մարմինների հետ: | | | | վարույթի օրինակա-նության նկատմամբ հսկողու-թյան վարչության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձ-ման վարչության թվայնացման կարիքները: | 3. Մշակվել և գործարկվել են տեխնոլոգիական՝ օպերատիվ-հետախուզական լուծումներ, ապահովվել է քննչական հասանելիու-թյունը այլ մարմինների շտեմարաններին:<br><br>4. Ապահովվել է այլ մարմինների էլեկտրո-նային համակարգերի հետ փոխգործակ-ցելիությունը: | | Մամուլի հաղորդա-գրություն-ներ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.4.**<br><br>Անցկացնել կոռուպ-ցիայի դեմ պայքարի թեմաներով մասնա-գիտական վերապատ-րաստումներ և պատրաստումներ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատա-խազության հակակո-ռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականու-թյան նկատմամբ հսկողության վարչու-թյան, ապօրինի ծագում ունեցող գույքի | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1.Վերապատրաստման/պատրաստման ծրագրերը ներդրվել և գործում են Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում:<br><br>2. 2025 թվականի ավարտին Հակա-կոռուպցիոն կոմիտեի քննիչների, ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական | Տեխնիկա-կան բնութա-գրերի, մշակված ծրագրերի առկայու-թյուն<br><br>Վերապատ-րաստում-ների զեկույցներ<br><br>Գիտելիք-ների | Հակա-կոռուպ-ցիոն կոմիտե<br><br>(համա-ձայնու-թյամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատա-խազու-թյուն | ՀՀ արդա-րադատու-թյան նախարա-րություն |
| | Կոռուպցիայի հակազդման իրավապահ մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով վերապատրաս-տումների և պատրաստումների անցկացումը երաշխավորված չէ: | II | I | II | | | | | | |
| | | | Հաստատվել են կոռուպ-ցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագոր-ծությունների բացահայտ-ման և | Իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպցիոն հանցագործություն ների բացահայտ-ման և քննության առնչությամբ թեմաներով վերա-պատրաստումներ | Իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպ-ցիոն հանցագոր-ծությունների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներով | Իրականացվել է կոռուպցիայի դեմ պայքարին՝ այդ թվում կոռուպ-ցիոն հանցագոր-ծությունների բացահայտման և քննության առնչությամբ թեմաներով | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| բռնագանձման վարչության դատախազների համար | | | քննության առնչությամբ թեմաներն ու մոդուլները, վերապատ-րաստման ծրագիրն ու մեթոդաբա-նությունը, ինչպես նաև վերապատ-րաստում/ պատրաս-տում անցնող խմբերը: | և պատրաս-տումներ հաստատված խմբերից 30-%-ի հետ: | վերապատրաս-տումներ և պատրաստում-ներ հաստատ-ված բոլոր խմբերից առնվազն 60%-ի հետ: | վերապատրաս-տումներ և պատրաստում-ներ հաստատ-ված բոլոր խմբերից առնվազն 90%-ի հետ: | վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչու-թյան դատախազների առնվազն 90%-ը վերապատրաստվել է:<br><br>Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 90% իմացություն: | գնահատ-ման հաշվե-տվություն-ներ և աշխատա-կիցների շրջանում կատարվող հարցումներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | (համա-ձայնու-թյամբ)<br><br>ՀՀ արդա-րադա-տության ակադե-միա | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.5.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Իրականացնել կոռուպցիոն հանցա-գործությունների շրջանակի և դրանց քննչական ենթակայության վերանայում | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեական դատավա-րության օրենսգրքում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Միջազգային փորձի ուսումնա-սիրություն<br><br>Հանրային քննարկում-ներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ | ՀՀ արդա-րադա-տության նախա-րարու-թյուն | Հակակո-ռուպցիոն կոմիտե<br><br>(համաձայ-նությամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատախա-զություն<br><br>(համաձայ-նությամբ)<br><br>ՀՀ քննչա-կան կոմիտե<br><br>(համաձայ-նությամբ) |
| | 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունքում ապահովվեց կոռուպցիոն հանցագործու-թյունների շրջանակի հստակեցումը: Այդուհանդերձ, կոռուպցիոն հանցանքների ցանկի, ինչպես նաև դրանց քննչական ենթակայության առնչությամբ վերջերս մի շարք խնդիրներ են բարձրաձայնվել: Մասնավորապես, հստակ չէ, թե ինչ չափանիշների հիման վրա է եղել կոռուպցիոն և ոչ կոռուպցիոն հանցանքների դասակարգումը և արդյոք կոռուպցիոն հանցանքների ցանկում ներառված հանցանքները սպառիչ են: | II | I | II | | | | | | |
| | | | | | Միջազգային փորձի և չափանիշների հիման վրա վերանայվել է կոռուպցիան հանցագործու-թյունների ցանկը, ինչպես նաև քննչական ենթակայու-թյունը: | Մշակվել են կոռուպցիոն հանցանքների ցանկը վերանայող և ըստ այդմ՝ քննչական ենթակայությունը փոփոխող օրենսդրական ակտերի նախագծեր և այդ նախագծերը ներկայացվել են ՀՀ կառավա-րությանը և Կառավարության որոշմամբ հավանության են արժանացել: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ՁԼՄ հրապարակումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.6.**<br><br>Մշակել կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ և տարածվել են համապատասխան իրավապահ մարմինների շրջանում | Ուղեցույցի և միասնական մեթոդիկայի առկայություն<br><br>Վերապատրաստումների զեկույցներ<br><br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային | ՀՀ գլխավոր դատախազություն<br><br>(համաձայնությամբ)<br><br>Հակակոռուպցիոն կոմիտե<br><br>(համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Արդարադատության ակադեմիա<br><br>(համաձայնությամբ) |
| | Ներկայումս կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության արդյունավետությունը և միասնականությունը երաշխավորելու համար առկա չէ ընդունված մեթոդիկա և ուղեցույցներ, որոնք կներառեն մինչդատական քրեական վարույթի փուլից մինչև դատական քննության փուլը: | II | I | II | | | | | | |
| | | | | 1.Մշակվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության համապարփակ մեթոդիկա և ուղեցույցներ, որը կներառի մինչդատական քրեական վարույթի փուլից մինչև դատական քննության փուլը:<br><br>2.Մեթոդիկան և ուղեցույցը ներկայացվել են համապատասխան մարմիններին՝ | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | դրանք վերապատրաստման նյութերի մեջ ներառելու համար: | | | | հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.7.**<br><br>Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական/ ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Գնահատվել են հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմիններում ֆինանսական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները:<br><br>2. Տնտեսագիտական/ ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են կոռուպցիայի հակազդման իրավապահ բոլոր | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | Հակակոռուպցիոն կոմիտե<br><br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն<br><br>(համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն |
| | Հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների գործունեության ոլորտի առանձնահատկությունները ենթադրում են ֆինանսական տարաբնույթ հարցերի քննարկում, հաշվարկների և վերլուծության իրականացում:<br><br>Մինչդեռ, նշված ոլորտի | II | I | II | | | | | | |
| | | | Գնահատվել է հակակոռուպցիոն հակազդման իրավապահ մարմինների՝ տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների | Ըստ կարիքի՝ փորձագետներին իրավապահ մարմիններին աշխատանքներին ներգրավվելու աշխատանքներ են իրականացվել: | Ըստ կարիքի՝ փորձագետներին իրավապահ մարմիններին աշխատանքներին ներգրավվելու աշխատանքներ են իրականացվել: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | փորձագետներին այդ մարմիններում ներգրավելու օրենսդրական և գործնական հնարավորություն առկա չէ: | | ներգրավման կարիքները: | | | | մարմինների աշխատանքներին: | Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | | **ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 2.8.**<br><br>Անցկացնել վերապատրաստումներ հակակոռուպցիոն դատարանների դատավորների համար | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների և հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ հզորացման համատեքստում կարևոր է ապահովել հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական զարգացման | II | I | II | | | 1. Վերանայվել են հակակոռուպցիոն դատարանների դատավորների վերապատրաստման, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը:<br><br>2. Ծրագրերում ներառվել են կոռուպցիոն բնույթի | Ուսուցման, վերապատրաստման ծրագրեր:<br><br>Վերապատրաստումների զեկույցներ | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Արդարադատության ակադեմիա | Ընդհանուր ժողովի Ուսումնական հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>Բարձրագույն |
| | | | Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի, Վերաքննիչ դատարանում կոռուպցիոն բնույթի գործեր քննող դատավորների, իսկ Վերաքննիչ | Ծրագրի հաստատումից հետո հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 30 %-ը վերապատրաստվել է: | Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 70 %-ը վերապատրաստվել է: | Հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 90 %-ը վերապատրաստվել է: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հնարավորությունը՝ համապատասխան գործեր քննող դատավորների մասնագիտական բարձր պատրաստվածու-թյունն ապահովելու, կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնահատ-կությունների, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտ-ների հաշվառմամբ շարունակական հիմունքներով պարբերական վերապատրաս-տումների անցկացման և այլ եղանակներով: | | հակակո-ռուպցիոն դատարանի ստեղծումից հետո այդ դատարանի, Վճռաբեկ դատարանի հակակո-ռուպցիոն պալատի դատավոր-ների վերապատ-րաստման համար նախատես-ված ծրագրերը, ինչպես նաև դատավոր-ների թեկնածու-ների ուսուցման ծրագրերը<br>վերանայվել են՝ կոռուպցիոն բնույթի գործերի քննության առանձնա-հատկություն-ների, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտ-ների | | | | գործերի քննության առանձնահատկություն-ները, այդ թվում՝ միջազգային առկա ստանդարտները, ներառող մոդուլներ:<br>3. 2026 թ. ավարտին հակակոռուպցիոն դատարանների դատավորների առնվազն 90 %-ը վերապատրաստվել է: | Գիտելիք-ների գնահատ-ման հաշվե-տվություն-ներ և աշխատա-կիցների շրջանում կատարվող հարցումներ<br>Մամուլի հաղորդա-գրություններ<br>ԶԼՄ հրապարա-կումներ | (համա-ձայնու-թյամբ) | դատական խորհուրդ<br>(համաձայ-նությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հաշվառ-մամբ: | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.9.**<br><br>Մշակել հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Մշակվել են հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված մեթոդական ուղեցույցներ: | Ուղեցույցների առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | Բարձրագույն դատական խորհուրդ<br><br>(համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների և դատավորների կողմից քննվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկություններով պայմանավորված ուղեցույցներ սահմանված չեն: | II | I | II | | | | | | |
| | | | | | Մշակվել է ուղեցույցի նախագիծ, որով սահմանվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերի առանձնահատկությունները: | Ուղեցույցը հատկացվել է իրավասու մարմիններին և հրապարակվել է Արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում: | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 2.10.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | | II | I | II | | | | | | |
| Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների աշխատանքներին ներգրավել տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների: | Հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինների կողմից քննվող գործերի մեծ հատվածը առնչվում են ֆինանսական միջոցների անօրինական տեղաշարժերի, դրանց փոխարկման և օրինականացման հետ: Նման հարցերով մշտական մասնագիտական աջակցության կարիք ունեն Կոռուպցիոն գործերի քննություն իրականացնող դատավորները: | | 1.Գնահատվել է հակակոռուպցիոն դատարաններում՝ տնտեսագիտական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները:<br><br>2.Ըստ կարիքի՝ փորձագետներին դատարանների աշխատանքներին ներգրավվելու քայլեր են իրականացվել: | Հակակոռուպցիոն դատարաններում տնտեսագիտական /ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են: | Հակակոռուպցիոն դատարաններում տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են: | | 1. Գնահատվել են հակակոռուպցիոն դատարաններում ֆինանսական գիտելիքներ ունեցող փորձագետների ներգրավման կարիքները:<br><br>2. Տնտեսագիտական/ֆինանսական և անհրաժեշտ այլ ոլորտներում գիտելիքներ ունեցող փորձագետները ներգրավվել են հակակոռուպցիոն բոլոր դատարանների աշխատանքներին: | Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | Բարձրագույն դատական խորհուրդ<br><br>(համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն |

| Ֆինանսավորում | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 2.11.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | | II | I | II | | | | | | |
| Սահմանել կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական կարգ և կատարելագործել առկա կառուցակարգերը: | Հակակոռուպցիոն միջազգային պարտավորություններ<br>ների շրջանակում կոռուպցիոն վիճակագրական առանձին տվյալների բացակայությունը հանգեցնում է պարտավորության՝ չկատարված գնահատվելուն: Այս տեսանկյունից հատկապես խնդրահարույց է դատական քննության փուլին առնչվող վիճակագրական տվյալների ոչ ամբողջականությունը և դրանց անհամադրելիությունը մինչդատական քրեական վարույթի փուլում վարվող վիճակագրական տվյալների հետ: | | | Մշակվել է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ՝ ներառելով մինչդատական և դատական քննության փուլերը: | Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման համար ապահովվել են օրենսդրական հիմքերը և ծրագրային/ տեխնիկական լուծումները: | Ներդրվել է վիճակագրության վարման էլեկտրոնային համակարգ: | 1. Մշակվել է կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության վարման միասնական կարգ:<br><br>2. Ներդրվել են ծրագրային/տեխնիկական լուծումներ: | Ներդրված էլեկտրոնային գործիքներ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>Բարձրագույն դատական խորհուրդ<br><br>(համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ | | | | | | | | |
| **Գործողություն 2.12.**<br><br>Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ թեմաները ներառել դատավորների թեկնածուների հավակնորդների, դատավորների թեկնածուների ուսուցման և վերապատրաստման ծրագրերում: | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | | II | I | II | | | | | | |
| | Նշված թեմաներով պարբերական վերապատրաստում ներ չեն իրականացվում: | | Դատավոր-ների վերապատ-րաստման համար նախատես-ված ծրագրերը, ինչպես նաև դատավոր-ների թեկնածու-ների ուսուցման ծրագրերը վերանայվել են՝ ներառելով կոռուպցիայի կանխարգել-ման և դրա դեմ պայքարի թեմաներ: | Ծրագրերը հաստատվել են և հաստատումից հետո դատավորների թեկնածուների առնվազն 30 %-ը վերապատրաստ-վել է: | Դատավորների թեկնածուների առնվազն 60 %-ը վերապատ-րաստվել է: | Դատարանների դատավորների առնվազն 90 %-ը վերապատ-րաստվել է: | 1. Վերանայվել են դատավորների վերապատրաստման, ինչպես նաև դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերը:<br><br>2. Ծրագրերում ներառվել են կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մոդուլներ:<br><br>3. 2026 թ. ավարտին դատավորների թեկնածուների առնվազն 90 %-ը վերապատրաստվել է: | Ուսուցման, վերապատ-րաստման ծրագրեր:<br><br>Վերապատ-րաստում-ների զեկույցներ<br><br>Գիտելիք-ների գնահատ-ման հաշվե-տվություն-ներ և աշխատա-կիցների շրջանում կատարվող հարցումներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան | ՀՀ արդա-րադա-տության ակադե-միա<br><br>Բարձրա-գույն դատա-կան խորհուրդ<br><br>(համա-ձայնու-թյամբ) | ՀՀ արդա-րադատու-թյան նախարա-րություն<br><br>Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով<br><br>(համաձայ-նությամբ)<br><br>Ընդհանուր ժողովի Ուսումնա-կան հանձնա-ժողով<br><br>(համաձայ-նությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | | **ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 2.13.**<br><br>Կատարելագործել և արդիականացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը: | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի առնչությամբ բարձրաձայնվել են մի շարք խնդիրներ: | II | I | II | | | 1.«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին օրենքում և հարակից այլ ակտերում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և | Իրավական ակտի առկայու-թյուն | ՀՀ գլխավոր դատա-խազու-թյուն | ՀՀ արդա-րադատու-թյան նախարա-րություն |
| | | | | Միջազգային փորձի հաշվառմամբ վերանայվել է այս ինստիտուտի | Վերհանված խնդիրների հիման վրա՝ մշակվել են օրենսդրական | Գործարկվել է ինտեգրված հարթակ, որը ապահովվում է հետախուզության ստորաբաժանում | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կատարելագործ-ման և արդիականացման առնչությամբ՝ այդ թվում կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակման հարթակի, կառավարման հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծման: | փոփոխություն-ների նախագծեր, որոնցով կատարելագործ-վել են կառավարող մարմնի, բռնագանձված գույքի կառավարման մոդելի կառուցակար-գերը | ների, քննչական և դատախազա-կան մարմինների, ակտիվների վերադարձման մասնագետների միջև տեղեկատվու-թյան ակտիվ և անվտանգ փոխանակումը, ինչպես նաև հասանելիու-թյունը ապահովումը այլ պետական մարմինների տվյալների բազաներին: | ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Գործարկվել է ինտեգրված հարթակ: | Գործարկվող էլեկտրոնային գործիքներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ԶԼՄ հրապարա-կումներ | (համա-ձայնու-թյամբ) | Բարձր տեխնոլո-գիական արդյունա-բերության նախարա-րություն |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.14.**<br><br>Կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարո ղ մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին օրենքում և հարակից այլ | Իրավական ակտի | ՀՀ գլխավոր | ՀՀ պետական գույքի |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը: | ՏՀՁԿ (2022) Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի պիլոտային մոնիթորինգի 5-րդ փուլի վերաբերյալ զեկույցի դիտարկումներով այդուհանդերձ ուշադրության է արժանացել կոռուպցիոն և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով ապահովման ենթակա կամ բռնագանձված ակտիվների կառավարման թափանցիկությունն ու կանոնավոր աուդիտի իրականացումը (ցուցիչ 11.5.1): Նշվածի համատեքստում կարևորվում են մի շարք կառուցակարգերի ներդրումը և կատարելագործումը: | | | Միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակվել ներդրվել է կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման մեխանիզմներ նախատեսող իրավական ակտերի լավագույն փորձը (օրինակ՝ գույքի օգտագործումը հանրային նպատակներով) | Օրենսդրական փոփոխությունների և հարակից իրավական ակտերի նախագծերի փաթեթը հավանության է արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել է Ազգային ժողով: | | ակտերում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Ներդրվել է կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման լավագույն փորձը | առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | դատախազություն<br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | կառավարման կոմիտե |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.15.**<br><br>Մշակել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկա և ուղեցույցներ, անցկացնել մասնագիտական վերապատրաստումներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկա և ուղեցույցներ առկա չեն:<br><br>Այս թեմաներով չեն անցկացվում մասնագիտական վերապատրաստումներ: | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Մշակվել և կիրառվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ մեթոդիկան և ուղեցույցները: | Առկա ուղեցույցներ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ՁԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն | ՀՀ գլխավոր դատախազություն<br><br>(համաձայնությամբ) |
| | | II | I | II | | | | | | |
| | | | | | Հաստատվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ թեմաներն ու մոդուլները, վերապատրաստման ծրագիրն ու մեթոդաբանություն և ուղեցույցներ, որոնք տարածվել են համապատասխան իրավապահ մարմիններում: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 2.16.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| Ընդլայնել և արդիականացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային և անդրազգային հարթությունում կոռուպցիայի հակազդման մեխանիզմները, ինչպես նաև կատարելագործել միջազգային փոխօգնության մեխանիզմները: | Փոխօգնության մեխանիզմները արդյունավետ չեն գործում, ինչը խոչընդոտներ է առաջացնում ապօրինի գույքի բռնագանձման գործընթացի պատշաճ իրականացման համար: | II | I | II | | | «Միջազգային իրավական փոխօգնության» մասին օրենքում և հարակից այլ ակտերում օրենսդրական փոփոխությունների փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություններ<br><br>ՁԼՄ հրապարա-կումներ | ՀՀ արդա-րադա-տության նախա-րարու-թյուն | ՀՀ գլխավոր դատախա-զություն<br><br>(համաձայ-նությամբ) |
| | | | | | Միջազգային փորձի հիման վրա մշակվել են մեխանիզմներ ներդաշնակեց-ման ապահով-ման և գույքի վերադարձի դյուրինության երաշխավորման նպատակով՝ «Միջազգային իրավական փոխօգնության մասին» օրենքի ընդունմամբ: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | **ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ** |
|---|---|

| **Գործողություն 2.17.**<br>Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը | Ելակետային տվյալներ | Կատարողական թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Ազդարարման տարբեր տեսակների՝ մասնավորա-պես ներքին, հանրությանը ազդարարման և արտաքին ազդարարման գործնական արդյունավետ կիրառումը ապահովված չէ:<br>Ազդարարման համակարգի գործարկումից մինչ օրս պետական մարմիններում գրանցվել է ներքին ազդարարման 13 և արտաքին ազդարարման 73 դեպք:<br>Ազդարարման ներկա մոդելի առկայության պայմաններում սահմանված չեն ազդարարման հարցերով պատասխա-նատու անձանց | II | I | II | | | «Ազդարարման համա-կարգի մասին» ՀՀ օրենքում և հարակից իրավական ակտերում փոփոխությունների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառա-վարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը:<br>Մշակված են ազդարար-ման հարցերով պատաս-խանատուների գործու-նեության ապահովման առնվազն 2 ուղեցույց և մեթոդական նյութ: | Իրավական ակտի առկայու-թյուն<br>Մեթոդական նյութերի և ուղեցույցի առկայու-թյուն<br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ | ՀՀ արդա-րադա-տության նախա-րարու-թյուն | ՀՀ գլխավոր դատախա-զություն<br>(համաձայ-նությամբ)<br>Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով (համաձայ-նությամբ)<br>Քաղաքա-ցիական հասարա-կության կազմակեր-պություններ (համաձայ-նությամբ) |
| | | | Գույքագրվել են ազդարարման համակարգի հետ կապված գործնական խնդիրները: | 1. Վերանայվել է ազդարարման համակարգի ներկա մոդելը՝ հաշվի առնելով նաև ազդարարման տեսակների գործնական կիրառելիությունը ապահովելու անհրաժեշտու-թյունը, ինչպես նաև ՄԻՊ կողմից | Ազդարարման համակարգի մոդելի ընտրության արդյունքում անհրաժեշտու-թյան դեպքում ապահովվել է ազդարարման հարցով պատաս-խանատուների ընտրությունը և նշանակումը | Մշակվել են ազդարարման հարցերով պատաս-խանատուների գործունեության ապահովման ուղեցույցները և մեթոդական նյութերը: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նշանակելու չափանիշներ: Բացակայում են ազդարարման հարցերով պատասխանատուների վերապատրաստում իրականացնող պատասխանատու կառույցները:<br><br>Հստակ չեն մասնավոր կազմակերպությունների շրջանակի, վերջիններիս հետ կապված հաղորդումների ներկայացման, դրանց ընթացք տալու առանձնահատկությունները:<br><br>Բացի այդ ներկա իրավակարգավորումների պարագայում հանրությանը ազդարարելու հնարավորությունը ընձեռվում է սահմանափակ դեպքերում, մինչդեռ Ստամբուլյան | | | ազդարարների իրավունքների պաշտպանության կազմակերպական կառուցակարգերը:<br><br>2. Վերանայվել են հանրությանն ազդարարման առկա մեխանիզմները՝ ապահովելով հանրությանն ազդարարելու հնարավորությունը առանց ներքին և/կամ արտաքին ազդարարման տեսակները սպառելու այն դեպքերում, երբ կոռուպցիոն հակաօրինական արարքն անմիջական կամ ակնհայտ վտանգ է ներկայացնում հանրության համար, կամ երբ առկա է հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) վտանգ կամ խախտումը վերացնելու ցածր հավանականություն ազդարարման այլ տեսակներով ազդարարելու դեպքում: | մասնագիտական, արժանիքահեն սկզբունքներով ու ընթացակարգերով, ՀՀ արդարադատության նախարարությանը ճանաչվել է ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգման և նրանց վերապատրաստման կազմակերպման լիազոր մարմին: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի ազդարարման ոլորտի թիվ 2.1. հենանիշի համաձայն օրենքով պետք է նախատեսված լինի և գործնականում կիրառվի հանրային ազդարարման հնարավորություն: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.18.**<br><br>Զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Ազդարարման հետ կապված վիճակագրության վարման կարգը, վիճակագրության վարելու միասնական և պարտադիր կանոնները, վիճակագրության մեջ ներառվող տվյալները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային | ՀՀ արդարադատության նախարարություն | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն<br><br>(համաձայնությամբ) |
| | Բացակայում են ազդարարման հարցերով վիճակագրության վարելու միասնական և պարտադիր կանոնները, վիճակագրության մեջ ներառվող տվյալները և | II | I | II | | | | | | |
| | | | | Ներդրվել են վիճակագրության վարման պարտադիր և միասնական կանոններ՝ ներառելով նաև ազդարարների նկատմամբ կիրառված | Ընդլայնվել է ազդարարման հետ կապված վիճակագրություն վարելու պարտականություն ունեցող | Ապահովվել է միասնական վիճակագրության հրապարակայնությունը գործող էլեկտրոնային հարթակի միջոցով: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | վիճակագրություն վարողների շրջանակը կրում է սահմանափակ բնույթ: | | | պաշտպանության միջոցների վերաբերյալ տվյալները: | սուբյեկտների շրջանակը: | | | հաշվետվություններ | | Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 2.19.**<br><br>Կատարելագործել ազդարարման էլեկտրոնային հարթակը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Տեխնիկական բնութագիրը մշակված և հաստատված է:<br><br>2025 թվականի վերջին գործարկված է ազդարարման արդիականացված էլեկտրոնային հարթակը: | Տեխնիկական բնութագրերի առկայություն<br><br>Կիրառվող էլեկտրոնային գործիքներ | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն | Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>Բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարություն |
| | Ազդարարման գործող էլեկտրոնային հարթակը չի բավարարում օգտագործողին հարմար /user friendly/ հիմնական ստանդարտին, հարթակում 2023 թվականի դրությամբ արտացոլված որոշ տվյալներ՝ | II | I | II | | | | | | |
| | | | Վեր են հանվել ազդարարման էլեկտրոնային հարթակի հիմնական խնդիրները:<br><br>Ազդարարման միասնական | Մշակվել է ազդարարման էլեկտրոնային հարթակի նոր տեխնիկական բնութագիրը: | Տեխնիկական բնութագրի հիման վրա գործարկվել է ազդարարման նոր արդիականացված էլեկտրոնային հարթակը: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | այդ թվում հարթակի, դրա ընձեռած հնարավորությունների մասին տվյալները չեն արտացոլում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում 2022 թվականին դեկտեմբերին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները, հարթակում ներկայացվող վիճակագրական տվյալները կրում են սահմանափակ բնույթ, հարթակը հնարավորություն չի ընձեռում դրա միջոցով ներկայացնել նաև կազմակերպությունների վերաբերյալ հաղորդումներ: Բացի այդ, անհրաժեշտ է ապահովել հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքներ: | | էլեկտրոնային հարթակի անվտանգության լրացուցիչ երաշխիքների սահմանման շրջանակներում դիտարկվել է հարթակի ծրագրային ապահովման իրականացումը մասնավոր ընկերության կողմից «Ekeng» էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին հանձնելը: | | Դիտարկվել է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ծրագրային ապահովման իրականացումը էլեկտրոնային կառավարման ենթակառուցված քների ներդրման գրասենյակին հանձնելու նպատակահարմարության հարցը | | | | (համաձայնությամբ) | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ) |

| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 2.20.**<br>Կատարելագործել ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, դիտարկել ազդարարման խրախուսման մեխանիզմների նախատեսման նպատակահարմարությունը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Ներկայումս առկա չեն ազդարարման խրախուսմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ:<br>Ազդարարների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց է ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների արդյունավետությունը, այն, որ օրենսդրությամբ նախատեսված չեն նաև ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները, ազդարարման | II | I | II | | | «Ազդարարման համակարգի մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել են ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն<br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ արդարադատության նախարարություն<br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br>ՀՀ գլխավոր դատախազություն<br>(համաձայնությամբ) | Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)<br>Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) |
| | | | Միջազգային լավագույն փորձի լույսի ներքո դիտարկվել է ազդարարման խրախուսմանն ուղղված մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, վերանայվել է ազդարարներին տրվող պաշտպանության միջոցների շրջանակը, հզորացվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների իրավունքների պաշտպանությանն ուղղված կազմակերպական | 1. Հստակեցվել է ազդարարման վարույթի իրավական բնույթը, նախատեսվել են ազդարարման հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունվող ակտերին ներկայացվող հիմնական պահանջները՝ ապահովելով դրանց պատշաճ պատճառաբանվածությունը և հիմնավորվածությունը:<br>2. Նախատեսվել է ազդարարման վարույթի արդյունքում ընդունվող ակտերի բողոքարկման հնարավորություն: | Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերը հավանության են արժանացել Կառավարության կողմից և ներկայացվել են Ազգային ժողով: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հիման վրա հարուցված վարույթի արդյունքում ընդունված ակտերի բողոքարկման մեխանիզմները, հստակեցված չէ ազդարարման վարույթի բնույթը: Բացի այդ արդյունա-վետ չեն Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդա-րարների իրավունքների պաշտպանու-թյանն ուղղված առկա գործիքա-կազմերը: | | կառուցակար-գերը: | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 2.21.**<br><br>Իրականացնել իրավաբանական անձանց քրեական | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակա-տարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | 2025 թ. | 2026 թ. | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության փորձաքննություն և վերանայել փաստացի վերահսկողություն իրականացնող անձանց պատասխանատվությունը, կիրառվող սանկցիաների համաչափությունը և կոռուպցիոն բնույթի հանցագործություններով խրախուսական կառուցակարգերը: | 2022 թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած նոր քրեական օրենսգրքով (20-21-րդ գլուխներով) ներդրվեց իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը: Չնայած ինստիտուտի գործարկումը մի քանի ամիս է, ինչ մեկնարկել է, սակայն արդեն իսկ մի շարք մտահոգություններ են ներկայացվել փորձագիտական շրջանակների և գործարար համայնքի կողմից: | II | I | II | | | 1. Իրականացվել է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության փորձաքննություն:<br><br>2. ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունների նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն:<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության նախարարություն | Հակակոռուպցիոն կոմիտե<br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն<br>(համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե<br>(համաձայնությամբ)<br><br>Բարձրագույն դատական խորհուրդ<br>(համաձայնությամբ)<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ) |
| | | | | | Իրականացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման ազդեցության վերլուծություն: | ՀՀ քրեական օրենսգիրքը վերանայվել է՝ ներառելով փաստացի վերահսկողություն իրականացնող անձանց պատասխանատվությունը, կիրառվող սանկցիաների համաչափությունը և հակակոռուպցիոն խրախուսական կառուցակարգերը: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | Քաղաքա-<br>ցիական<br>հասարա-<br>կություն<br><br>(համաձայ-<br>նությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

| | |
|---|---|
| **ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** | 1. Ուսումնական հաստատություններում ներդրվել և հետևողականորեն իրականացվում են էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն կրթական ծրագրեր՝ նպաստելով հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ գիտելիքների փոխանցմանը, կոռուպցիայի՝ որպես բացասական երևույթ ընկալման կայուն հիմքերի ստեղծմանը:<br>2. Ուսումնական հաստատությունների անձնակազմը տիրապետում է հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, ընկալումների և հմտությունների:<br>3. Վերանայված առարկայական ծրագրերով կրթական գործընթացի կազմակերպումը ապահովում է արդյունավետ հակակոռուպցիոն կրթության իրականացումը՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելմանն ու դրա դեմ պայքարին ուղղված մասնագիտացված կրթությունը:<br>4. Ներդրվել են հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման գործուն մեխանիզմներ:<br>5. Ներդրվել և հետևողականորեն իրացվում է հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունները ծրագիրը՝ապահովելով հասարակության լայն շերտերի իրազեկումը և տեղեկացվածությունը՝ նպաստելով կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքի արմատավորմանը: |
| **ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ** | • Կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականությունը և դրա դեմ պայքարը դարձել են հասարակության արժեհամակարգի մաս և քաղաքացիների մեջ ձևավորվել է կոռուպցիան անձնապես մերժելու վարքագիծ, որի մասին վկայում են հեղինակավոր զեկույցները և իրականացված ուսումնասիրությունները:<br>• Հակակոռուպցիոն կրթության կազմակերպման ոլորտում ներդրվել են համակարգված և միասնական պետական քաղաքականություն վարելու գործուն կառուցակարգեր և մեխանիզմներ:<br>• Շարունակաբար՝ ըստ տարիների, հասարակության շրջանում արձանագրվում է հակակոռուպցիոն քաղաքականության, կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի աճ՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների: |

| **Գործողություն 3.1.**<br>Մշակել և ներդնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ նաև ՆՈՒՀ) 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներդրված չեն բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն թեմաներով երեխաներին գիտելիքներ փոխանցելուն ուղղված ծրագրեր: | II | I | II | I | II | | | | |
| | | | Մշակվել և հաստատվել են ՆՈՒՀ-երում բարեվարքության, էթիկայի և հակակոռուպցիոն ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները:<br><br>Ընտրվել են պիլոտային ՆՈՒՀ-երը: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ-երում: | Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում: | Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրը իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: | Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրը իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: | 1. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն ծրագիրը մշակվել և հաստատվել է, մեթոդաբանությունը մշակվել և հաստատվել է:<br>2. Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական բնակավայրերում:<br>3. Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում:<br>4. Գնահատման արդյունքներով ապահովվել է տարեկան 40% աճ: | Մշակված և կիրառվող ծրագրեր, ներառյալ հստակ մեթոդաբանությունները և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները<br><br>Տեսչական մարմինների մոնիթորինգային այցելությունների հաշվետվություններ<br><br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ<br><br>Գիտելիքների նախա- և հետթեստավորման արդյունքներ<br><br>Կիսամյակային և | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br><br>Կրթության տեսչական մարմին<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)<br><br>Տարածքային կառավարման մարմիններ<br>(համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.2.**<br><br>Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար մշակել և ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիր | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիրը մշակվել և հաստատվել է:<br><br>2. Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում:<br><br>3. Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություններում:<br><br>4. Գիտելիքների գնահատման արդյունքներով ապահովվել է տարեկան 40% աճ: | Վերապատրաստումների ծրագրեր<br><br>Տեսչական մարմինների մոնիթորինգային այցելությունների հաշվետվություններ<br><br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ<br><br>Գիտելիքների նախա- և հետթեստավորման արդյունքներ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)<br><br>Տարածքային կառավարման մարմիններ<br><br>(համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության |
| | ՆՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների համար ներդրված չեն էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստում անցկացնելու մեխանիզմներ: | II | I | II | I | II | | | | |
| | | | Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային ՆՈՒՀ-երի ընտրության չափանիշները: | Ընտրվել են պիլոտային ՆՈՒՀ-երը: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված ՆՈՒՀ-երում: Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը գյուղական համայնքներում: | Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրը | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | իրականացվել է ՀՀ ՆՈՒՀ-երի ընդհանուր թվի 50% հաստատություն-ներում, որոնցից կեսը գյուղական բնակավայրերում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: | | | Աշխատա-կիցների շրջանում կատարվող հարցումներ<br><br>Կազմակեր-պված միջոցա-ռումների հաշվետվու-թյուններ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ | | կազմակերպու-թյուններ (համաձայնու-թյամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.3.**<br><br>Հանրակրթության շրջանակում կատարելագործել «Հասարակագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Ներդրված է «Հասարա-կագիտություն» առարկայի առարկայական ծրագիրը, որում ներառված են հակակոռուպցիոն կրթության հիմնական բաղադրիչները:<br><br>2. Արդիականացված ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 50%-ում, | Մշակված և հաստատ-ված «Հասարա-կագիտու-թյուն» առարկայի ծրագիր | ՀՀ կրթու-թյան, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարա-րություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնու-թյամբ) |
| | Հանրակրթու-թյան շրջանակում դասավանդվող «Հասարակագի տություն» առարկայի առարկայական ծրագրի շրջանակում | II | I | II | I | II | | | | |
| | | | Հակակոռուպ-ցիոն կրթական բաղադրիչի մշակման համար տեխ-նիկական | Ընտրվել են պիլոտային դպրոցները: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: | Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 15 դպրոցներում, որոնցից 10-ը | Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրականացվել է ՀՀ դպրոցների | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ներառված չէ արդյունավետ հակակոռուպ-ցիոն բաղադրիչ: Հասարակա-գիտություն առարկայի շրջանակներում նախատեսված են Կոռուպցիայի վերաբերյալ խիստ սակավ տեղեկություն-ներ, սակայն դրանցում լուսաբանված չեն պետության կողմից կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի հիմնական մոտեցումները: Բացի այդ, կոռուպցիայի տարբեր ասպեկտների վերաբերյալ առկա նյութերը, մասնագիտա-կան տեսան-կյունից պարու-նակում են բարդ ձևակեր-պումներ: Առկա չէ մեթոդական և | | առա-ջադրանքը պատրաստվել և հաստատվել է: | Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում: | գյուղական համայնքներում: | ընդհանուր թվի 30% հաստա-տություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: Ծրագիրը իրականացվել է ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 50% հաստա-տություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: | որոնցից 50%-ը գյուղական համայնքներում: 3. Գիտելիքների ելակե-տային գնահատումը կատարվել է ՀՀ դպրոց-ների ընդհանուր թվի 50%-ում: | Մշակված և հաստատ-ված հակակո-ռուպցիոն բաղադրիչ պարունա-կող այլ ուսումնա-կան նյութեր Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ | | Կրթության տեսչական մարմին Տարածքային կառավարման մարմիններ (համաձայնու-թյամբ) Քաղաքացիա-կան հասարա-կության կազմա-կերպություններ (համաձայնու-թյամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ուսումնաօժանդակ գրականություն: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.4.**<br>Մշակել և ներդնել «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Դպրոցների ուսուցիչների համար վերապատրաստումների ծրագիրը մշակվել և հաստատվել է:<br>2. Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 50% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում:<br>3. Գիտելիքների գնահատման արդյունքներով ապահովվել է տարեկան 40% աճ: | Մշակված և հաստատված ծրագիր<br>Վերապատրաստումների զեկույցներ<br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ<br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br>Կրթության տեսչական մարմին<br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | «Հասարակագիտություն» առարկա դասավանդող ուսուցիչների համար չեն իրականացվում համապատասխան վերապատրաստումներ: | II | I | II | | | | | | |
| | | | Մշակվել և հաստատվել են վերապատրաստման ծրագրի մեթոդաբանությունը և մոդուլները, պիլոտային դպրոցների ընտրության չափանիշները: | Ընտրվել են պիլոտային դպրոցները: Մշակվել է գիտելիքների գնահատման համակարգը: Կատարվել է գիտելիքների ելակետային գնահատումը ընտրված դպրոցներում: Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 1520 դպրոցներում, որոնցից կեսը 10-ը գյուղական համայնքներում | Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրականացվել է ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.5.**<br><br>Նախնական մասնագի-տական (արհեստագոր-ծական) և միջին մասնա-գիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդնել էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, մանկավար-ժական անձնակազմի համար նախատեսել նշված թեմաներով վերապատ-րաստումներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Նախնական մասնագիտա-կան (արհեստա-գործական) և միջին մաս-նագիտական կրթության և ուսուցման շրջանակում ներդրված չեն էթիկայի, բարեվարքու-թյան և հակակոռուպ-ցիոն թեմանե-րով կրթական ծրագրեր, մանկավար-ժական անձնակազմի համար | II | I | II | I | II | 1. Կրթական ծրագիրը ներդրվել և գործում է ուսումնական հաստա-տությունների ընդհանուր թվի 30% հաստատություն-ներում, որոնցից կեսը գյուղական համայնք-ներում:<br><br>2. Վերապատրաստումը հաջողությամբ անցել է մանկավարժական անձնակազմի 100 ներկայացուցիչ:<br><br>4. Գիտելիքների գնահատման արդյունքներով ապահովվել տարեկան 40% աճ: | Մշակված և հաստատ-ված ծրագիր<br><br>Վերապատ-րաստում-ների զեկույցներ<br><br>Գիտելիք-ների գնահատ-ման հաշվետվու-թյուններ և աշխատա-կիցների շրջանում կատարվող հարցումներ | ՀՀ կրթու-թյան, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարա-րություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնու-թյամբ)<br><br>Կրթության տեսչական մարմին<br><br>Քաղաքացիա-կան հասարա-կության կազմա-կերպություններ (համաձայնու-թյամբ) |
| | | | Հաստատվել են բարեվար-քության, էթիկայի և հակակո-ռուպցիոն ծրագրի մեթոդաբա-նությունը և մոդուլները, պիլոտային ուսումնական հաստատու-թյունների ընտրության չափանիշ-ները: | Գիտելիքների ելակետային գնահատումը կատարվել է և ծրագիրն իրակա-նացվել է ուսում-նական հաստա-տությունների ընդհանուր թվի 30% հաստատություն-ներում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: Իրականացված ծրագրերի արդյունքները գնահատվել են: | Մշակվել և հաստատվել են վերապատրաստ-ման ծրագրի մեթոդաբանու-թյունը և մոդուլները:<br><br>Ծրագիրն իրականացվել է ուսումնական հաստատություն-ների ընդհանուր թվի 30% հաստատություն-ներում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: | Ուսումնական հաստատու-թյուններում անձնակազմի համար կազմակերպ-վել են վերապատ-րաստումներ: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նախատեսված չեն նշված թեմաներով վերապատրաստումներ: | | Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 20 ուսումնական հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում: | | | | | Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.6.**<br>Հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում պետական մարմինների պատվերով իրականացնել հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Առնվազն 10 հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում, տարեկան կտրվածքով 10 հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ | Մշակված և ֆինանսավորված ծրագիր<br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br>(համաձայնությամբ)<br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)<br>ՀՀ արդարադատության |
| | Հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում ներկայումս բացակայում են հակակոռուպցիոն բնագավառի գիտական հետազոտություններ | II | I | II | I | II | | | | |
| | | | Կարիքների գնահատման հիման վրա մշակվել է պետական պատվերի հիման վրա հակակոռուպցիոն բնագավառի գիտական | Ծրագիրը հաստատվել և ներկայացվել է ֆինանսավորման | Ծրագիրն իրականացվել է առնվազն 5 հետբուհական ուսումնական հաստատություններում | Ծրագիրն իրականացվել է առնվազն 5 հետբուհական ուսումնական հաստատություններում | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրականացնելուն խթանմանն ուղղված մեխանիզմներ | | հետազոտություններ իրականացնել ու ծրագիր և ներկայացվել ֆինանսավորման: | | | | | Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | նախարարություն |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.7.**<br><br>Ստեղծել հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների համար նախատեսված հարթակ՝ «Հայկական կրթական միջավայր» պորտալում նախատեսելով դրա համար առանձին բաժին | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Հարթակում ապահովվել է հայալեզու հակակոռուպցիոն գրականության առավել աղբյուրների առկայությունը:<br><br>Հարթակում գրանցված և դրանցից օգտվող անձանց թվաքանակը հասնում է առնվազն 1000-ի:<br><br>Իրականացվել են առնվազն 2 իրազեկման աշխատանքներ՝ թիրախային խմբերի համար: | Հարթակը ներդրված է և գործում է:<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | ՀՀ-ում բացակայում է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության կարևոր աղբյուրների հավաքագրման մեկ միասնական հարթակ, որի միջոցով հասարակությունը հնարավորություն կունենա ծանոթանալ և օգտվել հակակոռուպցիոն պայքարի համար կարևոր նշանակություն ունեցող տեսական և | II | I | II | I | II | | | | |
| | | | Մշակվել է հակակոռուպցիոն թեմատիկ գրականության աղբյուրների հարթակի տեխնիկական բնութագիրը: | Տեխնիկական նկարագիրը հաստատվել է և հատկացվել են հարթակի ներդրման ֆինանսական միջոցները: | Հավաքագրվել են հարթակում ներառման ենթակա հակակոռուպցիոն բաղադրիչ ունեցող առավել կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերը: | Հարթակը ներդրվել և գործարկվում է՝ ապահովելով հակակոռուպցիոն ծածկույթ ունեցող գրականության աղբյուրների լայն շրջանակ:<br><br>Իրականացվել են իրազեկման աշխատանքներ՝ թիրախային խմբերի համար: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | իրավակիրառ նշանակություն ունեցող նյութերին: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.8.**<br><br>Բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջիններիս համաձայնությամբ մշակել և ներդնել ուսանողների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն դասընթաց/բաղադրիչ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Տիպային դասընթացի հիման վրա բուհերի ուսանողների առնվազն 30 տոկոսը ստանում է հակակոռուպցիոն գիտելիք: | Տիպային մշակված դասընթաց<br><br>Դասընթացի ներդրում և դասավանդում առնվազն 5 բուհերում<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնությամբ)<br><br>Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | Հայաստանում գործող ընդհանուր թվով 14 կազմակերպությունների (5՝ երևանյան պետական բուհ, 3՝ մարզային պետական բուհ, 3՝ միջպետական համաձայնագրով ստեղծված բուհ, 3՝ հասարակական կազմակերպություններ) շրջանում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող կրթական ծրագրերն ընդգրկված են իրավունքի հիմունքներ առարկայի | II | I | II | I | II | | | | |
| | | | Տիպային դասընթացը մշակվել է: | Տիպային դասընթացը առաջարկվել է ԲՈՒՀ-երին՝ նրանց համաձայնությամբ պարտադիր ուսումնական ծրագրի մեջ ընդգրկելու համար: | Տիպային դասընթացը դասավանդվում է ԲՈՒՀ-երի պարտադիր ուսումնական ծրագրի մեջ: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | շրջանակում, դասավանդվող թեմաները միմյանցից էապես տարբերվում են, առկա չէ հակա-կոռուպցիոն դասընթացների թեմաներին վերաբերող միասնական մոտեցում, առկա է ուսում-նամեթոդական ձեռնարկների և դիդակտիկ այլ պարագաների խիստ կարիք: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.9.**<br><br>Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել պրո-ֆեսորադասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն վերապատրաստումների ծրագիր | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Բարձրագույն ուսում-նական հաստատություն-ներում պրոֆեսորադասա-խոսական անձնակազմի համար էթիկայի, բարե-վարքության և հակա-կոռուպցիոն թեմաներով վերապատրաստումների ծրագիրը մշակվել և հաստատվել է:<br><br>2. Ծրագիրը ներդրվել և գործում է ՀՀ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի առնվազն | Վերապատ-րաստում-ների զեկույցներ<br><br>Գիտելիք-ների գնահատ-ման հաշվետվու-թյուններ և աշխատա-կիցների շրջանում | ՀՀ կրթու-թյան, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարա-րություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնու-թյամբ)<br><br>Բարձրագույն ուսումնական հաստատու-թյուններ |
| | Բարձրագույն ուսումնական հաստատու-թյուններում ներդրված չեն պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի համար էթիկայի, բարեվարքու- | II | I | II | I | II | | | | |
| | | | Միջազգային և տեղական համանման փորձի հիման վրա մշակվել և հաստատվել են վերապատ-րաստման ծրագրի | Պիլոտային ծրագիրը իրականացվել է ՀՀ 4 մարզերի և Երևան քաղաքի 5 ԲՈՒՀ-երում: | Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի առնվազն 30% հաստատություն-ներում: Իրականացված ծրագրերի | Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի առնվազն 50% հաստատություն ներում: Իրականացված ծրագրերի | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | թյան և հակա-կոռուպցիոն թեմաներով վերապատ-րաստում անցկացնելու մեխանիզմներ: | | մեթոդաբա-նությունը և մոդուլները, պիլոտային բուհերի ընտրության չափանիշները:<br><br>Ընտրվել են պիլոտային ԲՈՒՀ-երը: | | արդյունքները գնահատվել են: | արդյունքները գնահատվել են: | 50% հաստատու-թյուններում: | կատարվող հարցումներ<br><br>Կազմա-կերպված միջոցա-ռումների հաշվետվու-թյուններ, մամուլի հաղորդա-գրություններ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ | | (համաձայնու-թյամբ)<br><br>Քաղաքացիա-կան հասարա-կության կազմա-կերպություններ (համաձայնու-թյամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.10.**<br><br>Բարձրագույն ուսումնական հաստատություններում մշակել և ներդնել հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնա-կության անցկացման ծրագրեր, նախատեսել հակակոռուպցիոն ոլորտում արտասահ-մանյան ուսումնական | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Հակակոռուպցիոն մարմինների և ուսում-նական հաստատություն-ների միջև համագոր-ծակցության հուշագրերը ստորագրված են:<br><br>Ուսանողական պրակ-տիկայի և փորձնակության | Ստորա-գրված են հուշագրերը<br><br>Հուշագրերի հիման վրա իրականաց- | ՀՀ կրթու-թյան, գիտու-թյան, մշակույթի և սպորտի նախարա-րություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով<br><br>(համաձայնու-թյամբ)<br><br>Բարձրագույն ուսումնական |
| | Բարձրագույն ուսումնական հաստատություն ներում ներդրված չեն հակակոռուպ-ցիոն ինստի-տուցիոնալ | II | I | II | I | II | | | | |
| | | | Հակակոռուպ-ցիոն մարմին-ների և ուսում-նական | Մշակվել և հաստատվել են Ուսանողական պրակտիկայի և փորձնակության | Ուսանողական պրակտիկայի և փորձնակության պրակտիկան պիլոտային | Բարձրագույն ուսումնական հաստատու-թյուններում անցկացվել է | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հաստատություններում սովորելու համար կրթաթոշակների տրամադրման հնարավորություններ | մարմիններում ուսանողական պրակտիկայի և փորձնակության անցկացման արդյունավետ ծրագրեր, պետության կողմից չեն տրամադրվում նպատակային կրթաթոշակներ արտասահմանյան ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոլորտում ուսանելու համար: | | հաստատությունների միջև ստորագրվել են համագործակցության հուշագրեր: | գործնական ծրագրերը: | կարգով անցկացվել է 5 ուսումնական հաստատությունների ուսանողների համար: Ելակետային և ավարտական գիտելիքների գնահատումները կատարված են: Ուսանողական պրակտիկայի և փորձնակության պրակտիկան անցկացվել է 5 ուսումնական հաստատությունների ուսանողների համար: Ելակետային և ավարտական գիտելիքների գնահատումները կատարված են: | մրցույթ, որի հիման վրա ընտրվել են հակակոռուպցիոն ոլորտում արտասահմանյան ուսումնական հաստատություններում սովորելու համար դիմած ուսանողները: | գործնական ծրագրերը մշակված և հաստատված են:<br><br>Գործնական պրակտիկայի նոր մոդելով առաջնորդվում են առնվազն 10 բուհ, այդ թվում՝ մարզային մասնաճյուղեր:<br><br>Տարեկան կտրվածքով առնվազն 2 ուսանող պետության կողմից տրամադրված կրթաթոշակի հիման վրա սովորում են արտասահմանյան ուսումնական հաստատություններում, որոնք մասնագիտացված են հակակոռուպցիոն ոլորտում: | վում են ուսանողական պրակտիկայի և փորձնակության ծրագրեր<br><br>Հատկացված են կրթաթոշակները | | հաստատություններ (համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.11.**<br><br>Նպաստել ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացմանը՝ դպրոցներում հիմնելով աշակերտական | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D)՝ հակակոռուպցիոն հետազոտություններ, իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն անցկացնելու և հակակոռուպցիոն ծրագրերին հետազոտական և անալիտիկ բնույթի այլ աջակցություն տրամադրելու նպատակով | Դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում ներկայումս բացակայում են հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ: | | Գնահատվել են դպրոցներում հակակոռուպցիոն ակումբներ, իսկ ԲՈՒՀ-երում՝ Հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու կարիքները:<br><br>Կարիքների գնահատման արդյունքում կազմվել են աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ և հակակոռուպցիոն լաբորատորիաներ ստեղծելու ծրագրեր: | Ծրագրի հիման վրա աշակերտական հակակոռուպցիոն ակումբներ են ստեղծվել ՀՀ դպրոցների ընդհանուր թվի 30% հաստատություններում, որոնցից կեսը գյուղական համայնքներում, իսկ հակակոռուպցիոն լաբորատորիաներ՝ ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի 30% հաստատություններում: | Ծրագրի ներդրման արդյունքում դպրոցներում ոչ ֆորմալ կրթության միջոցով փոխանցվում են հակակոռուպցիոն պայքարի վերաբերյալ գիտելիքներ, իսկ բուհերում՝ իրականացվում են հակակոռուպցիոն հետազոտություններ, այլ հետազոտական աշխատանքներ: | | 1. Առնվազն ՀՀ դպրոցների ընդհանուր թվի առնվազն 30% հաստատություններում հակակոռուպցիոն ակումբների հիմնում:<br><br>2. ԲՈՒՀ-երի ընդհանուր թվի առնվազն 30% հաստատություններում հակակոռուպցիոն լաբորատորիաների առկայություն: | Մշակված ծրագրեր<br><br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | (համաձայնությամբ)<br><br>Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.12.**<br><br>Մշակել և ներդնել հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիր, այդ թվում՝ հանրային իրազեկման | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Հասարակությունը հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագրով | Տեխնիկական առաջադրանքի | Կոռուպցիայի կանխարգելման | ՀՀ պետական կառավարման |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծրագրի իրականացման արդյունքների գնահատման համակարգ | Կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման 2022 թվականի գործողությունների ծրագրի շրջանակում՝ 6 ամիս շարունակ՝ առնվազն 7 և ավելի անգամ հասարակությունը իրազեկվել է հակակոռուպցիոն բարեփոխումների մասին: Սակայն իրազեկման արշավները չեն կրել թիրախային բնույթ, չեն ապահովել հասարակության լայն շերտերի ներգրավումը, իրազեկումը և տեղեկացվածությունը, հաշվի չեն առնվել և գնահատվել ազգային հոգեկերտվածքի հետ կապված առանձնահատկությունները, չեն առանձնացվել հիմնական ֆոկուս խմբերը: | | 1. Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքը մշակվել և հաստատվել է:<br><br>2. Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագիրը մշակվել և հաստատվել է:<br><br>3. Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունների մեթոդոլոգիան մշակվել և հաստատվել է: | 1. Հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի արդյունքների պարբերական գնահատման համակարգը մշակվել և հաստատվել է:<br><br>2. Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունը կատարվել է և արդյունքների գնահատման զեկույցը հրապարակվել է: | Ըստ մշակված հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի և հաշվի առնելով հանրային կարծիքի ուսումնասիրության գնահատման արդյունքները՝ հակակոռուպցիոն ոլորտին առնչվող տեղեկությունները տարածվում են՝ ապահովելով հասարակության իրազեկումը և տեղեկացվածությունը: | Ըստ մշակված հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրերի և հաշվի առնելով հանրային կարծիքի ուսումնասիրության գնահատման արդյունքները՝ հակակոռուպցիոն ոլորտին առնչվող տեղեկությունները տարածվում են՝ ապահովելով հասարակության իրազեկումը և տեղեկացվածությունը | սահմանված պարբերականությամբ տեղեկացվում է հակակոռուպցիոն քաղաքականության, պետական մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների և պարտականությունների, ազդարարման համակարգի, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության, իրական շահառուների, գնումների և այլ թիրախային թեմաների վերաբերյալ, հետևողականորեն քայլեր են ձեռնարկվում հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ: | առկայություն<br><br>Հանրային կարծիքի ուսումնասիրություն<br><br>Մշակված և կիրառվող ծրագրեր<br><br>Մշակված և կիրառվող գնահատման համակարգ<br><br>Մշակված և հրապարակված զեկույց<br><br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | հանձնաժողով (համաձայնությամբ) | համակարգի մարմիններ<br><br>Իրավապահ մարմիններ<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br>Հանրային հեռարձակող խորհուրդ<br><br>Հանրային հեռարձակողների<br><br>Մասնավոր հեռարձակողներ (համաձայնությամբ |

| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 3.13.**<br>Զարգացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունները հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | Կազմակերպված և անցկացված են առնվազն 20 վերապատրաստման դասընթացներ՝ ԿԿՀ-ի աշխատակիցների համար: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 90% իմացություն: | Վերապատրաստումների զեկույցներ<br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ<br>Գիտելիքների նախա- և հետթեստավորման արդյունքներ<br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) | ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ<br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների համար ներկայումս չեն իրականացվում հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում արդյունավետ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր: | II | I | II | | | | | | |
| | | | | Կազմվել է կարողությունների հզորացման ծրագիր, ռեսուրսները գնահատվել են: | ԿԿՀ համապատասխան բաժինների համար պարբերաբար իրականացվում են սեփական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր, վերապատրաստումներ: | ԿԿՀ համապատասխան բաժինների համար պարբերաբար իրականացվում են սեփական կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր, վերապատրաստումներ: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի հաղորդագրություններ<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.14.**<br>Հզորացնել ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի կարողությունները՝ հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆոնդհայթայթման իրականացման նպատակով | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 2024 թ. ավարտին հաստատվել և ֆինանսավորվել է ՔՀԿ-ների կարողությունների զարգացման ծրագիրը:<br>2025 թվականի ավարտին Ծրագիրն իրականացվել է առնվազն 6 ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի համար:<br>2026 թ. ավարտին կազմակերպված և | Մշակված և կիրառվող ծրագրեր<br>Վերապատրաստումների զեկույցներ<br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և մասնակիցների | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) | ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններ<br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | Հակակոռուպցիոն բնագավառում ոչ ֆորմալ կրթության կազմակերպման հիմնական բեռը ստանձնել է քաղաքացիական հասարակությունը, սակայն իրականացվող ոչ ֆորմալ | II | I | II | | | | | | |
| | | | Հակակոռուպցիոն ոչ ֆորմալ կրթության և հանրային իրազեկման ոլորտում ՔՀԿ-ների ֆոնդհայթայթման մասնակցային մեխանիզմները մշակվել | Կարողությունների և կարիքների գնահատման արդյունքում կարողությունների հզորացման ծրագիրը կազմվել է, ռեսուրսները գնահատվել են: | Կարողությունների հզորացման ծրագիրն իրականացվել է առնվազն 6 ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների ցանցերի համար: | Ֆոնդհայթայթման արդյունքում ՔՀԿ-ների հետ համատեղ իրականացվում են հանրային իրազեկման արշավներ, ոչ ֆորմալ կրթության խթանմանն | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կրթական ծրագրերի ծավալը բավա-րար չէ և չի կարող ցանկալի արդյունք ապահովել: Հանրային իրազեկման տեսանկյունից ևս իրականաց-վող միջոցա-ռումներն ունեն հատվածական բնույթ: Նշվածը պայմանավոր-ված է նաև ՔՀԿ-ների հետ արդյունավետ մասնակցային մեխանիզմների բացակայության հանգամանքով: | | և հաստատվել են:<br><br>ՔՀԿ-ների ֆոնդհայթայթման կարողությունները և կարիքները գնահատվել են: | | | ուղղված ծրագրեր: | անցկացված են առնվազն 35 վերապատրաստման դասընթացներ՝ ՔՀԿ-ի համար: Վերապատրաս-տումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերա-պատրաստումից հետո իրականացված գիտելիք-ների ստուգման արդյունքում վերապատ-րաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:<br><br>2025 թվականի ավարտին ՔՀԿ-ների հետ համատեղ իրականացվել են առնվազն 10 իրազեկման արշավներ: | շրջանում կատարվող հարցումներ<br><br>Կազմա-կերպված միջոցա-ռումների հաշվետվու-թյուններ, մամուլի հաղորդա-գրություններ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվետվու-թյուններ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 3.15.**<br><br>Ներդնել հակակոռուպ-ցիոն կրթության ոլորտի միասնական իրավակար-գավորումներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | «Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխար-գելման մասին կրթության» վերաբերյալ օրենքի | Իրավական ակտի | Կոռուպ-ցիայի կանխար-գելման | Քաղաքացիա-կան հասարա-կության կազմա-կերպություններ |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բացի այդ, հարկ է նշել, որ բացակայում է հակակոռուպցիոն կրթության ոլորտում միասնական քաղաքականության հիմնահարցերը կարգավորող իրավական ակտ, այդ թվում հակակոռուպցիոն կրթության միասնական մեթոդաբանությունը: | | | | Միջազգային լավագույն փորձի լույսի ներքո մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման մասին կրթության մեկ միասնական օրենքի նախագիծ, որում հստակեցվել են հակակոռուպցիոն կրթության ընդհանուր նպատակը, մեթոդաբանությունը ինստիտուցիոնալ համակարգը և այլ առանցքային հիմնահարցեր: | Կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման մասին կրթության վերաբերյալ օրենքի և հարակից իրավական ակտերի փաթեթի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է Ազգային ժողով: | նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը: | առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | հանձնաժողով<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | (համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |

| | |
|---|---|
| ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ **4. ԳՈՐԾԱՐԱՐ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՅՈՒՐԱՑՈՒՄ** | |
| **ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ** | 1. Կորպորատիվ կառավարման նոր կանոնագիրքը հաստատված է և կիրառվում է: Կանոնագիրքը կիրառող առևտրային կազմակերպություններում ներդրված են կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգեր և մեխանիզմներ:<br><br>2. 2026 թ. ավարտին բոլոր պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պարտադիր կերպով կիրառվում է: Բոլոր պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդրված են հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգերը:<br><br>3. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և մեղմացման ծրագրերը հաստատված են և կիրառվել են առնվազն 5 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում: |

<table>
<tr><td colspan="2"></td><td colspan="9">4. Ներպետական իրավական համակարգում ներդրված են մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման նոր մեխանիզմներ, գործիքակազմեր և կառուցակարգեր:<br><br>5. Մաքսային և հարկային ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ներդրված են «խելացի» հակակոռուպցիոն նոր էլեկտրոնային գործիքակազմեր:<br><br>6. Կատարելագործված է իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման ինստիտուտը, մասնավորապես, ներդրված և կիրառվում են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերը, մշակված և հաստատված է իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման մեթոդաբանությունը և տեխնիկական կանոնակարգերը:<br><br>7. Օրենսդրորեն բացառված են պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում:</td></tr>
<tr><td colspan="2">ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ</td><td colspan="9">● Պետական կառույցների և վարչական գործընթացների նկատմամբ բիզնես համայնքի վստահության աճ՝ ի համեմատություն 2022 թ. առկա տվյալների և ուսումնասիրությունների:<br>● 2026 թ. ավարտին նոր Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը կիրառող առևտրային կազմակերպությունների թվի աճ առնվազն 50%-ով՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների:<br>● 2026 թ. ավարտին առնվազն 5 ամենախոշոր պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կիրառվել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման և մեղմացման ծրագրերը:<br>● Պետական գնումների գործընթացների նկատմամբ քաղաքացիների և կազմակերպությունների վստահության աճ՝ ի համեմատություն 2022 թ. տվյալների:</td></tr>
<tr><td colspan="2">ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ</td><td colspan="9">ԳՈՐԾԱՐԱՐ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ</td></tr>
<tr><td rowspan="4">Գործողություն 4. 1.<br><br>Գործարար ոլորտում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր՝ զարգացնելով կորպորատիվ կառավարման մշակույթը</td><td rowspan="2">Ելակետային տվյալներ</td><td colspan="5">Կատարողականի թիրախներ</td><td>Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ</td><td>Ստուգման միջոց</td><td>Կատարող մարմին</td><td>Համակատարող մարմին</td></tr>
<tr><td>2023 թ.</td><td colspan="2">2024 թ.</td><td>2025 թ.</td><td>2026 թ.</td><td rowspan="3">1. Կանոնագիրքը հաստատված է իրավասու մարմնի կողմից:<br><br>2. Կանոնագրքում ներառված են մոնիթորինգի, հաշվետվողականության, թափանցիկության և վերահսկողության մեխանիզմներ:<br><br>3. Կազմակերպված և իրականացված են Կանոնագրքի կիրառման պրակտիկան խրախուսող</td><td rowspan="3">Իրավական ակտի առկայություն<br><br>Կազմակերպված միջոցառումների հաշվետվություններ, մամուլի</td><td rowspan="3">ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</td><td rowspan="3">ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կորպորատիվ կառավարման կենտրոն (համաձայնությամբ)</td></tr>
<tr><td rowspan="2">Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հավանության է արժանացել 2010 թ. դեկտեմբերի 30-ին:<br><br>Անհրաժեշտություն է առաջացել ընդունել նոր Կանոնագիրք, որը համահունչ կլինի</td><td>II</td><td>I</td><td>II</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td>Կորպորատիվ կառավարման նոր կանոնագրքի նախագիծը լրամշակվել է Կորպորատիվ կառավարման միջազգային</td><td>Կանոնագիրքը հաստատվել է իրավասու մարմնի կողմից:</td><td>Կազմակերպվել և իրականացվել են Կանոնագրքի իրավակիրառ պրակտիկան խրախուսող և խթանող առնվազն 2</td><td>Մասնագիտացված ՔՀԿ-ների հետ (գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար</td></tr>
</table>

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բիզնես ոլորտի և կորպորատիվ կառավարման մշակույթի նոր զարգացումներին: | | ստանդարտներով ամրագրված հակակոռուպցիոն պահանջներին համապատասխան:<br>Սահմանվել են Կանոնագրքի կիրառման վերահսկողության մեխանիզմներ | | միջոցառումներ (պետական աջակցության առնվազն 1 ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանությամբ կորպորատիվ կառավարման կանոնագրքի կիրառումը սահմանել որպես աջակցություն ստանալու չափանիշներից մեկը, Քրեական օրենսգրքով Կանոնագրքի կիրառումը դիտարկվել է իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառող կամ մեղմացնող հանգամանք)՝ այդ թվում նաև տեղեկատվական արշավներ, իրազեկման բարձրացման միջոցառումներ առնվազն 3 դասընթացներ: | անդամակցությամբ զբաղվող կազմակերպությունները) համագործակցությամբ կազմակերպվել և իրականացվել են հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ներդրումը և հավաքական գործողությունները խթանող առնվազն 3 իրազեկման արշավներ:<br>Մասնագիտացված ՔՀԿ-ների հետ (business support organizations/ business membership organizations) համագործակցությամբ կազմակերպվել և անցկացվել են վերապատրաստումներ: | առնվազն 2 միջոցառումներ:<br>4. 2026 թ. ավարտին մասնագիտացված ՔՀԿ-ների հետ (business support organizations/ business membership organizations) համագործակցությամբ կազմակերպված և անցկացված են առնվազն 8 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև սոցիալական հարթակների և ԶԼՄ-ների միջոցով:<br>5. 2026 թ. ավարտին մասնագիտացված ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ կազմակերպված և անցկացված են առնվազն 8 վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 90% իմացություն: | հաղորդագրություններ<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ/ գործարար շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ և գործարար անդամակցությամբ զբաղվող կազմակերպություններ (համաձայնությամբ)<br>Կորպորատիվ կառավարման կենտրոն (համաձայնությամբ) |

<table>
<tr><td>Ֆինանսավորում</td><td colspan="10">Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ</td></tr>
<tr><td rowspan="4">Գործողություն 4. 2.<br><br>Պետական և համայնքային առևտրային կազմակերպություններում ներդնել հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր, կատարելագործել հաշվետվողականության մեխանիզմները</td><td rowspan="2">Ելակետային տվյալներ</td><td colspan="5">Կատարողականի թիրախներ</td><td>Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ</td><td>Ստուգման միջոց</td><td>Կատարող մարմին</td><td>Համակատարող մարմին</td></tr>
<tr><td>2023 թ.</td><td colspan="2">2024 թ.</td><td>2025 թ.</td><td>2026 թ.</td><td rowspan="3">1. Իրավական ակտով սահմանված է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պարտադիր կիրառելու պահանջը:<br><br>2. Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և այլ հարակից օրենքներում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը, որով կատարելագործվել են պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնօրենի և խորհրդի անդամների թափանցիկ, արժանիքահեն նշանակման, խորհրդի անդամների</td><td rowspan="3">Իրավական ակտերի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ</td><td rowspan="3">ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</td><td rowspan="3">ՀՀ ֆինանսների նախարարություն</td></tr>
<tr><td rowspan="2">1. 2022 թ. ընթացքում մշակվել է պետական աջակցության ծրագրով հակակոռուպցիոն համապատասխանության առկայությունը՝ որպես առավելություն տվող չափանիշի սահմանմանն ուղղված իրավական ակտի նախագիծը, սակայն այն չի ընդունվել կամ հաստատվել: Նախագիծը գտնվում է ներքին քննարկումների փուլում:<br><br>2. 2022 թ. դրությամբ «Բիզնես բարեվարքության» ակումբի շուրջ 22 մասնակից ներդրել է հակակոռուպցիոն համապատասխանության կառուցակարգեր:</td><td>II</td><td>I</td><td>II</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td>Պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար սահմանվել է նոր կորպորատիվ կառավարման կանոնագիրքը պարտադիր կիրառելու պահանջ:</td><td>Մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով կատարելագործվել են պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնօրենի և խորհրդի անդամների թափանցիկ, արժանիքահեն նշանակման, խորհրդի անդամների անկախության չափորոշիչները, հաշվետվողականության և</td><td></td></tr>
</table>

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | թափանցիկու-թյան, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակար-գերը, արտաքին աուդիտի պահանջները:<br><br>Օրենսդրական փոփոխություն ների փաթեթը հաստատվել է ՀՀ կառավա-րության կող-մից և ներկա-յացվել է ՀՀ ԱԺ-ի ընդուն-մանը | | անկախության չափորոշիչները, հաշվետվողականության և թափանցիկության, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակար-գերը, արտաքին աուդիտի պահանջները: | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 4.3.**<br><br>Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություն-ներում ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգեր | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Ռիսկերի կառավարման և գնահատման մեթոդաբանությունը հաստատված է: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Վերա-պատրաս-տումների զեկույցներ<br><br>Գիտելիք-ների | Կոռուպ-ցիայի կանխար-գելման հանձնա-ժողով (համաձայ-նությամբ) | ՀՀ արդարա-դատության նախարարու-թյուն |
| | Պետական և համայն-քային կազմակերպու-թյուններում կոռուպ-ցիոն ռիսկերի գնա-հատման և կառա-վարման համակարգի ներդրմանն առնչվող հարցերը դուրս են մնացել ՀՀ օրենսդրա-կան և | II | I | II | | | | | | |
| | | | 1. Մշակվել է օրենսդրական փոփոխություն-ների փաթեթ, որով ԿԿՀ-ին վերապահվել է պետական և | 1. Օրենսդրական փաթեթը հաս-տատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկա-յացվել է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | 1. Հզորացվել են Կոռուպ-ցիայի կան-խարգելման հանձնա-ժո-ղովի ինստի-տուցիոնալ | Կոռուպցիոն ռիսկերի գնահատման և մեղմացման ծրագրերը հաստատվել են ՏՀԶԿ-ի կողմից | 2. Օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնա-ժողովի մասին» և այլ հարակից օրենքներում | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ռազմավարական կարգավորումների դաշտից:<br><br>Հաստատված չէ նաև ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունը: | | համայնքային կազմակերպու-թյուններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման մեթոդաբանու-թյան մշակման և հաստատման իրավասություն: | 2. Հաստատվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատ-ման և կառավար-ման մեթոդաբա-նությունը:<br><br>3. Մեթոդաբանու-թյունը պիլոտային կարգով փոր-ձարկված է առնվազն 3 տարբեր կազմակերպա-իրավական ձև ունեցող կազմակերպու-թյուններում: | կարողություն-ները:<br><br>2. ԿԿՀ աշխատակից-ների համար կազմակերպվել և անցկացվել են առնվազն 5 վերապատ-րաստման դասընթացներ:<br><br>3. Պիլոտային գնահատում անցած կազմա-կերպություն-ների համար կազմակերպվել և անցկացվել են առնվազն 3 վերապատ-րաստման դասընթացներ: | նշված առնվազն 5 ամենախոշոր պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպու-թյուններում (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ, «ՀԱԷԿ» ՓԲԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «ԲԷՑ» ՓԲԸ, «Ջրառ» ՓԲԸ) | հավանության է արժանացել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ԱԺ-ի ընդունմանը:<br><br>3. Մեթոդաբանությունը պիլոտային կարգով փորձարկված է առնվազն 3 տարբեր կազմակեր-պաիրավական ձև ունեցող կազմակերպություններում:<br><br>4. ԿԿՀ աշխատակիցների համար կազմակերպված և անցկացված են առնվազն 5 վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:<br><br>5. Պիլոտային գնահատում անցած կազմակերպու-թյունների համար կազմա-կերպված և անցկացված են առնվազն 3 վերապատ-րաստման դասընթացներ: Վերապատրաստումներն | գնահատ-ման հաշվե-տվություններ և աշխա-տակից-ների շրջանում կատարվող հարցում-ներ<br><br>Կազմա-կերպված միջոցա-ռումների հաշվե-տվություն-ներ, մամուլի հաղորդա-գրություն-ներ<br><br>Կիսամյա-կային և տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերա-պատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերա-պատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:<br><br>6. 2025 թ. ավարտին կոռուպցիոն ռիսկերի գնահատման և մեղմաց-ման ծրագրերը հաս-տատված են առնվազն 5 կազմակերպություններում: | | | |
| **Ֆինանսավորում** | | | | | | | | | | |
| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | | **ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 4. 4.**<br><br>Հզորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները՝ մասնավոր հատվածի | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման թափուր | Կիսամյա-կային և տարեկան | Մարդու իրավունք-ների | Մասնագիտաց-ված ՔՀԿ-ներ |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում | 2021 և 2022 թվականներին ՄԻՊ համապատասխան ստորաբաժանում ստացվել է 207 գրավոր դիմում-բողոք 271 անձից: Նշված 207 գրավոր դիմում-բողոքներից 41-ը ներկայացվել է գործարար համայնքի ներկայացուցիչների կողմից:<br><br>Վիճակագրական տվյալները վերաբերում են միայն Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված գրավոր բողոքներին և չեն ներառում, օրինակ, գործարարության ոլորտում առկա համակարգային խնդիրների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ իրականացված աշխատանքների, տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների, իրականացված այցերի, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող գործերի քննությանը ներգրավվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ: | | Համալրվել են ՄԻՊ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության համապատասխան ստորաբաժանման հաստիքները: | Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 2 վերապատրաստման դասընթացներ ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: | Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 4 վերապատրաստման դասընթացներ ՄԻՊ համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների համար՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ | | հաստիքները համալրված են:<br><br>2. 2026 թ. ավարտին ՄԻՊ աշխատակիցների համար կազմակերպված և անցկացված են առնվազն 6 վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն: | մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Վերապատրաստումների զեկույցներ<br><br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ | պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ) | (համաձայնությամբ) |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Վերոգրյալի հետ մեկտեղ, տեղեկացնում ենք, որ 2021 և 2022 թվականներին վերը նշված ստորաբա-ժանումը Պաշտպանի աշխատակազմում գործող թեժ գիծ և այլ հեռախոսահամար-ներով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրել է 896 իրավաբանական խորհրդատվություն՝ իրենց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ:<br><br>ՄԻՊ համապա-տասխան ստորա-բաժանումում առկա է թափուր հաստիքների համալրման խնդիր: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 4.5.**<br><br>Բարձրացնել բիզնես համայնքի իրազեկ-վածության մակար-դակն իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտ-պանության և հակակոռուպցիոն | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | | | | | | | | | |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 2026 թ. ավարտին կազմակերպված և իրականացված են առնվազն 6 | Կիսամյա-կային և տարեկան | ՀՀ էկոնո-միկայի | ՀՀ արդարա-դատության |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| մեխանիզմների վերաբերյալ | 2023 թ. ապրիլին «ՀՀ-ում մասնավոր հատվածին հանրային ծառայությունների մատուցման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի գնահատման» արդյունքները վկայում են այն մասին, որ բիզնես համայնքը բավարար չափով տեղեկացված չէ առկա հակակոռուպցիոն մեխանիզմների, ինչպես նաև իրենց իրավունքների արդյունավետ միջոցների մասին: Այս առումով նշվել է, որ առկա մեխանիզմները (e-draft համակարգ, ոչ կանոնավոր հանրային քննարկումներ) բավարար չեն ու պետությունը պետք է ակտիվ աշխատանք տանի հատկապես հետևյալ երկու ուղղություններով՝ բիզնես ասոցիացիաների հետ ակտիվ աշխատանք և մասնավոր հատվածի իրազեկում նախատեսվող ու իրականացվող միջոցառումների (ներառյալ՝ օրենսդրական բարեփոխումները), դրանց պատճառների, նպատակների ու ընթացքի մասին: | | | Կազմակերպվել և իրականացվել են իրազեկվածության բարձրացման առնվազն 2 միջոցառումներ բիզնես համայնքի շրջանում՝ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ: | Կազմակերպվել և իրականացվել են իրազեկվածության բարձրացման առնվազն 4 միջոցառումներ բիզնես համայնքի շրջանում՝ իրենց իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության և հակակոռուպցիոն մեխանիզմների վերաբերյալ: | | իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ այդ թվում նաև ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով: | մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | նախարարություն | նախարարություն<br>Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ (համաձայնությամբ)<br><br>Մասնագիտացված ՔՀԿ-ներ (համաձայնությամբ) |

| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 4.6.**<br><br>Կատարելագործել ԿԿՀ-ի գործիքակազմը մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | | II | I | II | | | | | | |
| | Միջազգային պրակտիկայում տարածված է այն մոտեցումը, համաձայն որի՝ կոռուպցիայի կանխարգելմամբ զբաղվող մարմիններին վերապահված է գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման գործառույթ, որն իրականացվում է մարմնի համապատասխան ստորաբաժանման կամ անհրաժեշտ թվով մասնագետների միջոցով: Միաժամանակ, այդ մարմիններին է վերապահված նաև գործարար հատվածի հետ համագործակցության շրջանակներում խորհրդապահական հանդիպումների իրականացման գործիքակազմը՝ միտված կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը և բարեփոխման | | | | Մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով ԿԿՀ-ն օժտվել է բիզնես ոլորտի հետ կոնֆիդենցիալ հանդիպումներ կազմակերպելու իրավասությամբ և ռեսուրսներով՝ վեր հանելու նեղ ոլորտային կոռուպցիոն սխեմաներն ու այլ խնդիրները<br><br>Օրենսդրական փոփոխություններ փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է | | Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և այլ հարակից օրենքներում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան հաշվետվություններ | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) | ՀՀ արդարադատության նախարարություն |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | առաջարկությունների ներկայացմանը թիրախ ոլորտներում: | | | | ԱԺ-ի ընդունմանը: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 4.7.**<br><br>Ներդնել իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետությունը ապահովող մեխանիզմներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Ընդերքի մասին» ՀՀ օրենքի նախագծերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և | Իրավական ակտի առկայություն<br><br>Տեխնիկական կանոնակարգերի առկայություն<br><br>Ուղեցույցների առկայություն<br><br>Կիսամյակային և | ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | Բացակայում են Իրական շահառուների վերաբերյալ ներկայացվող տեղեկությունների արժանահավատության ստուգման արդյունավետ մեխանիզմները, ներդրված չէ իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման հստակ մեթոդաբանություն, տեխնիկական կանոնակարգեր:<br><br>«Իրական շահառու» եզրույթը տարբեր կերպ է արտացոլված | II | I | II | | | | | | |
| | | | 1. Ներդրվել են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգեր: | 1. Մշակվել է իրավաբանական անձանց ստուգման մեթոդաբանությունը և պատրաստվել են տեխնիկական կանոնակարգեր:<br><br>2. Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, | 1. Ապահովվել է տվյալների արժանահավատության հանրային վերահսկողության հնարավորությունը:<br><br>1. Ապահովվել է «իրական շահառու» եզրույթի իրավական բովանդակության միասնականությունը՝ | 1. Միասնական ստանդարտների հիման վրա պատրաստվել և հրապարակվել են իրական շահառուների նույնականացման մատչելի ուղեցույցներ՝ ըստ իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևի: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ոլորտային իրավական ակտերում:<br><br>Առկա չեն իրական շահառուների նույնականացման մատչելի ուղեցույցներ: | | | եկամուտների և ծախսերի հայտա-րարագրերի լրացման ԿԿՀ-ի կողմից ընդունված ուղեցույցի մեջ սահմանվել են իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու բոլոր հիմքերը: | տարբեր իրավական ակտերում: | | ներկայացվել է ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Ներդրված և կիրառվում են իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերը:<br><br>3. Մշակված և հաստատ-ված են իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման մեթոդաբա-նությունը և տեխնիկական կանոնակարգերը:<br><br>4. Ապահովված է հայտարարագրման պարտականություն ունեցող իրավաբանական անձանց ներկայացրած տվյալների արժանա-հավատության հանրային վերահսկողության հնարավորությունը:<br><br>5. Հստակեցված է «իրական շահառու» եզրույթի իրավական բովանդակությունը և հնարավորինս ապահով-ված է վերջինիս միասնականությունը | տարեկան մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Մամուլի հաղորդա-գրություն-ներ<br><br>ԶԼՄ հրապա-րակումներ | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | տարբեր իրավական ակտերում:<br><br>6. Մշակված և իրապարակված են իրական շահառուների նույնականացման հիմնական ուղեցույցները՝ ըստ իրավաբանական անձի կազմակերպական ձևի: | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 4.8.**<br><br>Արդիականացնել և կատարելագործել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը և կարգավորումները | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Կատարելագործված և արդիականացված են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրված են նոր էլեկտրոնային գործիքակազմեր: Վերջիններս կիրառվում են պրակտիկայում:<br><br>2. Ապահովված է պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի փոխգործակցելիությունը այլ՝ այդ թվում օտարերկրյա էլեկտրոնային շտեմարանների հետ: | Գործարկվող էլեկտրոնային գործիքներ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ | ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր | Արդարադատության նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով |
| | Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային գործող համակարգը չունի անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունները՝ տվյալների մշակման, վերլուծության, փնտրման, ծանուցումների ինքնաշխատ ուղարկման, ըստ ռիսկայնության չափանիշների իրավաբանական անձանց նշման՝ «կարմիր դրոշակների» սահմանման (red flagging), վերլուծական | II | I | II | | | | | | |
| | | | 1. Ապահովվել է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդյունավետ գործարկումը, երաշխավորվել է տվյալների մշակման, վերլուծության, որոնման, | 1. Լուծվել են գործնականում ծագած խնդիրները (բացառվել են համակարգի տեխնիկական խափանումները, էլեկտրոնային հայտարարագրերում ապահովվել է օրենսդրությամբ պահանջվող տվյալների պարտադիր լրացումը, անփութության սխալները | 1. Ապահովվել է պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի փոխգործակցելիությունը ներպետական էլեկտրոնային շտեմարանների հետ՝ մասնավորապես ԿԿՀ-ի էլեկտրոնային համակարգի, բաժնետերերի ռեեստրի, | 1. Ապահովվել է պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի փոխգործակցելիությունը միջազգային համագործակցության շրջանակում՝ իրական շահառուների օտարերկրյա ռեգիստրների միջև: | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տվյալների գեներացման, մեծածավալ (bulk) բաց տվյալներ գեներացնելու, նորարական գործիքներ ներդնելու համար:<br><br>Ապահովված չէ պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի փոխգործակցելիությունը այլ մարմինների տվյալների շտեմարանների հետ:<br><br>Միջազգային համագործակցության շրջանակում առկա չեն օտարերկրյա ռեգիստրների հետ փոխգործելիության հնարավորություններ: | | ծանուցումների ինքնաշխատ ուղարկման, ըստ ռիսկայնության չափանիշների իրավաբանական անձանց նշման (red flagging), վերլուծական, մեծածավալ (bulk) բաց տվյալների գեներացման հնարավորությունը: | բացառելու նպատակով ներդրվել են խելացի գործիքներ, հնարավոր է դարձնել ֆիզիկական անձանց՝ հայտարարագիր ներկայացնելու առցանց լիազորումը:<br><br>2. Իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը գործում է բաց տվյալների (open contracting data standards), բաց աղբյուրների (open source) ստանդարտներով և user-friendly (օգտագործողին հարմար) և machine readable (մեքենայական ընթերցվող) ձևաչափով: | պետական գնումների էլեկտրոնային համակարգի հետ:<br><br>2. Ներդրվել է տվյալների ինքնաշխատ փոխանակման գործուն մեխանիզմ: | 2. Ներդրվել է տվյալների ինքնաշխատ փոխանակման գործուն մեխանիզմ: | 3. Իրականացվում է տվյալների ինքնաշխատ փոխանակում:<br><br>4. Նորմատիվ ակտերի փոփոխությունների փաթեթը հաստատված է ՀՀ կառավարության/ԿԿՀ կողմից, որով սահմանվել են իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու բոլոր հիմքերը: | ԶԼՄ հրապարակումներ | | ՀՀ կենտրոնական դեպոզիտարիա<br><br>Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | **ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ** | | | | | | | | |

| **Գործողություն 4.9.** | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | | II | I | II | | | | | | |
| Բարձրացնել հարկային վարչարարության արդյունավետությունը, կատարելագործել ստվերային տնտեսության դեմ պայքարի գործիքակազմը և մեղմացնել բիզնես-հարկային մարմին փոխհարաբերություններում սուբյեկտիվիզմը ու կոռուպցիոն ռիսկերը | ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1830-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից կատարման ենթակա միջոցառումների մասով Ծրագրի 1.1-րդ կետի 1.1.14-րդ ենթակետով նախատեսվել է ստեղծել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթների (այսուհետ՝ ՎԻՎ վարույթներ) էլեկտրոնային կառավարման համակարգ:<br><br>Ներկայումս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հարկային մարմնի քննությանը ենթակա գործերով հարկ վճարողների | | | Կատարելագործվել են գործող էլեկտրոնային գործիքակազմերը կամ ներդրվել են «խելացի» հակակոռուպցիոն նոր էլեկտրոնային գործիքակազմեր: | Նոր էլեկտրոնային գործիքակազմերը կիրառվում են պրակտիկայում: | | 1. Առկա գործիքակազմը կատարելագործված է կամ ներդրված են նոր «խելացի» հակակոռուպցիոն էլեկտրոնային գործիքներ: | Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ պետական եկամուտների կոմիտե (համաձայնությամբ) | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պաշտոնատար անձանց նկատմամբ ՎԻՎ վարույթները հարուցվում և իրակա-նացվում են թղթային եղանակով: Միջո-ցառման շրջանակում ՎԻՎ վարույթների իրականացումը նախա-տեսվում է իրակա-նացնել էլեկտրոնային համակարգի միջոցով, ավտոմատացված ձևով՝ առանց օգտվողի անմիջական մասնակ-ցության, ինչի շրջանա-կում հարկային մարմնի տեղեկատվական համակարգի տվյալների բազայում առկա տեղե-կատվության հիման վրա պետք է իրակա-նացվեն տվյալների համադրումներ, ստեղծ-վեն ՎԻՎ վարույթի փաստաթղթեր, իրականացվի դրանց ծանուցումը:<br><br>Ի կատարումն վերոնշյալ միջոցառ-մամբ նախատեսված գործողությունների՝ 03.03.2021 թ. ընդունվել է «Վարչական իրավա-խախտումների վերա-բերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփո-խություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-87-Ն ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտնելու | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | էլեկտրոնային համակարգի ներդրման պահից:<br><br>Ներկայումս չկատարված հարկային պարտավորությունների գանձման գործընթացն ամբողջությամբ իրականացվում է «Հարկատու 3» էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հարկային մարմնում վարվող՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտերում ներառված ՀՀ հարկային օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված կարգով չվճարված հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Մասնավորապես՝ չկատարված հարկային պարտավորություններ ունեցող հարկ վճարողների ցանկի ձևավորումը կամ գեներացումը համապատասխան գործիքակազմի միջոցով կատարվում է նշված համակարգի կողմից: Ցանկում ներառված հարկ վճարողներին անմիջապես էլեկտրոնային եղանակով ուղարկվում է ծանուցում օրենքով սահմանված ժամկետում հարկային | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պարտավորությունների վճարումները չկատարելու վերաբերյալ:<br><br>Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 14.03.2019 թ. «Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը, ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետները և տրամադրման ձևերը հաստատելու մասին» թիվ 169-Լ հրամանով կարգավորվում են ՀՀ ՊԵԿ-ի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումներին և հիմնարկներին ծառայություններ մատուցելու հարաբերությունները, որոնցով նաև նախատեսված են ծառայությունների մատուցման այնպիսի շրջանակ, որոնք իրականացվում են էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ: (https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIServiceSingleStandard ): | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |

| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 4.10.**<br><br>Կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բախման և հակակոռուպցիոն կառուցակարգերը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել և բարելավել հանրային գնումների ոլորտում շահերի բախման կառուցակարգերը:<br><br>Առկա է անհրաժեշտություն կատարելագործել «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները: | II | I | II | | | 1. Անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների փաթեթը «Պետական գնումների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացված է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը:<br><br>2. Էլեկտրոնային գործիքակազմի ներդրման տեխնիկական առաջադրանքը մշակված և հաստատված է:<br><br>3. Երկու համակարգերի միաժամանակյա առկայության դեպքում էլեկտրոնային համակարգերը փոխկապակցված են և կիրարկվում են պրակտիկայում: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Առկա տեխնիկական բնութագիր | ՀՀ ֆինանսների նախարարություն | ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) |
| | | | | Մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով կբացառվեն պետական բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց ընտանիքի անդամների, վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությունը պետական գնումների գործընթացներում:<br><br>Օրենսդրական փաթեթը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի ընդունմանը: | ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյանը (ARMEPS) փոխկապակցվել է ԿԿՀ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի հետ, որի միջոցով էլեկտրոնային գնումների տվյալները փոխանցվում են ԿԿՀ-ին՝ ներառյալ շահերի բախման առկայության կամ բացակայության մասին հայտարարությունները: | | | | | |

| Ֆինանսավորում | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Գործողություն 4.11.**<br><br>Կատարելագործել մրցակցության ոլորտի իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերը, մշակել այդ գործիքների կիրառման ուղեցույցներ | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Մշակված են տնտեսական շուկայում իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերի և այլ գործիքների տեխնիկական բնութագրերը:<br><br>2. Համապատասխան էլեկտրոնային գործիքները ներդրված են և կիրառվում են պրակտիկայում:<br><br>3. Ուղեցույցները մշակված են և տարածված են անձնակազմի միջև:<br><br>4. ՄՊՀ-ի աշխատակիցների համար կազմակերպված և անցկացված են առնվազն 6 վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատ- | Տեխնիկական բնութագրերի առկայություն<br><br>Կիրառվող էլեկտրոնային գործիքներ<br><br>Վերապատրաստումների զեկույցներ<br><br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ<br><br>Ուղեցույցների | Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ) | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն |
| | Հանձնաժողովը 2022 թվականին գործարկել է նոր էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ e-Compete համակարգ): e-Compete համակարգը փոխգործելի է մի շարք պետական մարմինների էլեկտրոնային համակարգերի հետ, որոնցից վեբ ծառայությունների միջոցով ստացվում են տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալներ, օրինակ՝ գործունեության ոլորտի, բաժնետերերի, այլ ընկերություններում մասնակցության, ակտիվների և հասույթի մասին տեղեկատվություն: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ գերիշխող դիրքի առաջացման և ամրապնդման դեպքերը վերահսկելու նպատակով Համակարգում կիրառվում են այնպիսի ալգորիթմներ, որոնք Կադաստրի | II | I | II | | | | | | |
| | | | Մշակվել է տնտեսական շուկայում իրավախախտումները վերհանող համակարգչային ապահովման սքրինինգային ծրագրերի և այլ գործիքների տեխնիկական բնութագիրը | Էլեկտրոնային գործիքակազմերը ներդրվել են և կիրառվում են պրակտիկայում: | 1. Մշակվել են սքրինինգային ծրագրերի և իրավախախտումները վերհանող այլ գործիքների կիրառման մատչելի և համապարփակ ուղեցույցներ:<br><br>2. Շարունակաբար զարգացվել են ՄՊՀ-ի կարողությունները նշյալ գործիքների արդյունավետ կիրառման ուղղությամբ: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կոմիտեի և Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների շտեմարաններից, նախանշված չափորոշիչներին համապատասխան, ինքնաշխատ եղանակով ներբեռնում են իրավաբանական անձանց կողմից իրականացվող այն գործարքների մասին տվյալներ, որոնք առերևույթ կարող են լինել չհայտարարագրված համակենտրոնացումներ:<br><br>Միաժամանակ, e-Compete համակարգի և Պետական եկամուտների կոմիտեի էլեկտրոնային շտեմարանների փոխգործելիության արդյունքում վեբ ծառայությունների միջոցով ստացվում են խոշոր առևտրային ցանցերում լայն սպառման մի շարք ապրանքատեսակների գների վերաբերյալ տվյալներ, իսկ համակարգում ներդրված Power BI գործիքի միջոցով այդ տվյալների հիման վրա գեներացվում են հաշվետվություններ, | | | | | | րաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն: | առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | որոնց օգնությամբ իրականացվում է գների ամենօրյա մոնիթորինգ շուկայում գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների դրսևորմամբ ապրանք-ների գների չհիմնա-վորված բարձրացման, իջեցման կամ պահ-պանման հնարավոր դեպքերը հայտնա-բերելու նպատակով: Գների մոնիթորինգն ինքնաշխատ եղանա-կով հրապարակվում է նաև Հանձնաժողովի պաշտոնական կայքում: | | | | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 4.12.** Արդիականացնել և կատարելագործել գնումների պլանավորման համակարգը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |
| | Ոլորտային ամենախնդրահարույց հարցերից է շարունակում մնալ այն պրակտիկան, որ պետական գնումների ոլորտում մրցույթների ընթացակարգերի հրավերներում տեխնիկական բնութագրեր եւ այլ | II | I | II | | | | | | |
| | | | | | Մշակվել և գործարկվել են պատվի-րատուների կողմից ձեռք բերվող հիմնական ապրանքների | | 1. Մշակված և իրավական ակտի տեսքով հաստատ-ված են պատվիրատուների կողմից ձեռք բերվող հիմնական ապրանքների համար միասնական բնութագրերը: | Իրավական ակտի առկայու-թյուն<br><br>Կիսամյա-կային և տարեկան | ՀՀ ֆինանս-ների նախարա-րություն | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | չափորոշիչները համա-պատասխանեցվում են կոնկրետ կազմա-կերպությունների համար՝ վերջիններիս հաղթանակն ապա-հովելու նպատակով, քանի որ առկա չեն հստակ չափորոշիչներ, առնվազն՝ հիմնական ապրանքների համար: Ֆինանսների նախարարության կողմից վերջին տարիներին նշյալի դեմ պայքարի շրջանակ-ներում մշակված մեխանիզմները բավարար կերպով չեն կարողանում վերացնել Արատավոր պրակտի-կան, ինչի մասին վկայում են Իրավա-բանների հայկական ասոցիացիայի կողմից վարվող Բիզպաշտպան ազդարարման հարթակի միջոցով ստացված ազդարարումները[1]: | | | | համար միասնական բնութագրեր | | 2. Մշակված է միանման բնութագրեր ունեցող հիմնական սպառման ապրանքների կատալոգը:<br><br>3. Համակարգը ներդրված է և կիրառվում է պրակտիկայում: | մոնիթո-րինգային հաշվե-տվություն-ներ<br><br>Առկա տեխնի-կական բնութագիր | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 4.13.**<br><br>Շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատա-րող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | | | | |

[1] https://bizprotect.am/am/success-stories/show/18

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| թափանցիկության և հրապարակայնության համակարգերը | Ներկայումս էլեկտրոնային գնումներն ընդգրկում են գնման գործընթացի բոլոր փուլերը, ներառյալ պայմանագրերի կատարման փուլը: Գնումների գործընթացների, ներառյալ նաև պայմանագրերի կատարման, վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը հրապարակվում և թարմացվում է գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել հանրային գնումների գործընթացների թափանցիկության և հրապարակայնության համակարգերը՝ ներդնելով հակակոռուպցիոն նոր խելացի գործիքակազմեր և փոխգործելիության համակարգեր: | II | I | II | | | 1. Էլեկտրոնային գործիքակազմի ներդրման կամ թարմացման տեխնիկական առաջադրանքը մշակված և հաստատված է:<br><br>2. Պրակտիկայում կիրառվում են հակակոռուպցիոն նոր խելացի համակարգեր/գործիքակազմեր: | Մամուլի հաղորդագրություններ, ԶԼՄ հրապարակումներ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ ֆինանսների նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն |
| | | | | Մշակվել է առկա խելացի գործիքակազմերի կամ նոր համակարգերի ներդրմանն ուղղված տեխնիկական բնութագիր: | Թարմացվել կամ ներդրվել են նոր հակակոռուպցիոն խելացի գործիքակազմեր: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 4.14.**<br><br>Կատարելագործել և բարելավել հանրային գնումների ոլորտում հաշվետվողականության կառուցակարգերը՝ հանրության և մասնավոր ոլորտի | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Մշակված և հաստատված է իրազեկման միջոցառումների պլանը: | | ՀՀ ֆինանսների | ՀՀ արդարադատության |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ | Հանրության և գործարարների շրջանում հանրային գնումների գործընթացների վերաբերյալ առկա է հակասական կարծիք: Այս ոլորտը մշտապես ասոցացվում է կոռուպցիոն ռիսկերի առկայության հետ: Ուստի, անհրաժեշտ է իրականացնել գործուն քայլեր հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ: | | Մշակվել է իրազեկման միջոցառումների պլան՝ հանրության և մասնավոր ոլորտի շրջանում գնումների գործընթացի վերաբերյալ վստահության բարձրացման և ամրապնդման ուղղությամբ: | Կազմակերպվել և իրականացվել են առնվազն 4 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով: | Կազմակերպվել և իրականացվել են առնվազն 6 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով: | Կազմակերպվել և իրականացվել են առնվազն 8 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով: | 2. 2026 թ. ավարտին կազմակերպված և անցկացված են առնվազն 18 իրազեկման արշավներ՝ այդ թվում նաև ԶԼՄ-ների և սոցիալական հարթակների միջոցով: | Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | նախարարություն | նախարարություն<br><br>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |
| ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ | | **ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 4.15.**<br><br>Կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման արդյունավետության բարձրացման նպատակով | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. 2026 թ. ավարտին կազմակերպված և անցկացված են առնվազն 18 վերապատրաստման | Կիսամյակային և տարեկան | | Պետական վերահսկողական ծառայություն |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| շարունակաբար զարգացնել և կատարելագործել ինստիտուցիոնալ կառուցակարգերը և մեխանիզմները | Անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ: | | | 1. Հզորացվել են գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ:<br><br>Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 4 վերապատրաստման դասընթացներ:<br><br>2. Մշակել կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների քննության վարման ուղեցույցներ և պրոտոկոլներ՝ ապահովելով քննչական գործողությունների միատեսակ պրակտիկան | Հզորացվել են գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ:<br><br>Կազմակերպվել և անցկացվել են առնվազն 6 վերապատրաստման դասընթացներ: | Հզորացվել են գլխավոր դատախազության, հակակոռուպցիոն կոմիտեի, քննչական կոմիտեի, հաշվեքննիչ պալատի, պետական վերահսկողության ծառայության, մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պաշտոնատար անձանց կարողությունները կոռուպցիոն բնույթի տնտեսական իրավախախտումների բացահայտման ուղղությամբ:<br><br>Կազմակերպվել և անցկացվել են առնվազն վերապատրաստման 8 դասընթացներ: | դասընթացներ: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածները ցուցաբերել են առնվազն 80% իմացություն:<br><br>2. Մշակվել են քննության վարման ուղեցույցներ: | մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Վերապատրաստումների զեկույցներ<br><br>Գիտելիքների գնահատման հաշվետվություններ և աշխատակիցների շրջանում կատարվող հարցումներ<br><br>Մամուլի հաղորդագրություններ<br><br>ԶԼՄ հրապարակումներ | ՀՀ արդարադատության ակադեմիա | (համաձայնությամբ)<br><br>Հաշվեքննիչ պալատ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)<br><br>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ) |

<table>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>տվյալ<br>մարմիններում:</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ֆինանսավորում</td><td colspan="10">Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ</td></tr>
<tr><td colspan="11">ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ</td></tr>
<tr><td colspan="2">ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ</td><td colspan="9">5.1 ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ</td></tr>
<tr><td colspan="2">ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</td><td colspan="9">1. Մոնիթորինգի և գնահատման գործընթացը թվայնացվել է, մոնիթորինգի և գնահատման տարեկան և կիսամյակային զեկույցները իրականացվել են հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի միջոցով:<br>2. Մոնիթորինգի և գնահատման իրականացման ընթացակարգի հայեցողական դրույթները հստակեցվել են:<br>3. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ներառված են հակակոռուպցիոն բոլոր մարմինները, ՔՀԿ-ի համար նախատեսված 7 տեղերը լրացված են:<br>4. Սահմանված է կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հասարակական ընկալումների պարզման մեթոդաբանությունը, առկա է այդ հարցումների իրականացնող լիազոր մարմին և այգ գործընթացի իրականացման կարգավորումները:<br>5. Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափը և ընթացակարգը հաստատված է:<br>6. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու ստորաբաժանումը ունի իր գործունեության արդյունավետ իրականացման համար մարդկային ռեսուրսներ, գործիքակազմ, իսկ աշխատակիցներն ապահովված են իրենց գործառույթներին համարժեք սոցիալական երաշխիքներով:<br>7. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուները ամբողջությամբ տիրապետում են իրենց գործառույթներին:<br>8. Հակակոռուպցիոն ոլորտի ՔՀԿ-ների համար համակարգված ձևով վերապատրաստումներ են իրականացվում:</td></tr>
<tr><td colspan="2">ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ</td><td colspan="9">1. Դյուրացվել են մոնիթորինգի և գնահատման գործընթացները:<br>2. Մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը թույլ է տալիս իրականացնել հակակոռուպցիոն ռազմավարության և դրա գործողությունների ծրագրի՝ թե որակական, թե քանական մոնիթորինգ և գնահատում:<br>3. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի ներգրավման կարգավորումները որոշակի են, կազմը ներառական է:<br>4. Կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հասարակական ընկալումների պարզման նպատակով իրականացվում են հարցումներ, դրանց արդյունքներն ամփոփվում են մոնիթորինգային զեկույցներում և (կամ) հակակոռուպցիոն քաղաքականություն մշակելիս:<br>5. Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքներն արդյունավետ համակարգվում են:<br>6. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու ստորաբաժանումը ինստիտուցիոնալ հզորացման արդյունքում վերջինիս գործառույթներն արդյունավետորեն իրականացվում են:<br>7. Ներգերատեսչական մակարդակում արդյունավետորեն ապահովվում է հակակոռուպցիոն ծրագրերի և ոլորտային միջազգային պարտավորությունների համակարգման գործընթացը Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կողմից:<br>8. Հակակոռուպցիոն ոլորտի ՔՀԿ-ները կարողությունների համատեքստում հզորացել են:</td></tr>
<tr><td>Գործողություն 5. 1.</td><td>Ելակետային տվյալներ</td><td colspan="5">Կատարողականի թիրախներ</td><td>Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ</td><td>Ստուգման միջոց</td><td>Կատարող մարմին</td><td>Համակատարող մարմին</td></tr>
</table>

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գործարկել հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակ | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Համապատասխան կազմակերպության կողմից փոփոխվել է հակակոռուպցիոն մոնիթորինգի պլատֆորմը, նախնական տարբերակը ներկայացված է Արդարադատության նախարարություն:<br><br>2. Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակում գրանցվել և իրենց անձնական էջերն են վարում Հակակոռուպցիոն ռազմավարության համար պատասխանատու մարմինները:<br><br>3. Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի շահառուների շրջանում իրականացված հարցման արդյունքներով հարցվածների առնվազն 80%-կարողանում է առանց էական խոչընդոտների գործարկել հարթակը: | Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>Մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը շահագործող մարմինների շրջանակում | Արդարադատության նախարարություն | Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն |
| | Հակակոռուպցիոն մոնիթորինգի գործող հարթակը՝ https://anti-corruption.gov.am/am/ կայքը սահմանափակ հնարավորություններ ունի, որի արդյունքում հնարավոր է լինում նշված հարթակով ապահովելու միայն արդեն մշակված զեկույցի ներբեռնումը և մամլո հաղորդագրությունների տեղադրումը: Նշված հարթակը չունի զեկույց գեներացնելու, նշածից զատ տեղեկություններ ներբեռնելու, գնահատելու հնարավորություններ<br><br>Դեռևս 2022 թվականից մեկնարկել էր հակակոռուպցիոն նոր հարթակի մշակման աշխատանքները, որոնք անավարտ մնացին: | II | I | II | | | | | | |
| | | | | 1. Մեկնարկել են հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքները:<br><br>2. Վերանայվել է հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման հարթակի տեխնիկական առաջադրանքը: | Հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը գործարկվել է: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 5.2.**<br><br>Բարելավել մոնիթորինգի և | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գնահատման իրականացման ընթացակարգը | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը բարելավման ուղղված փաստաթղթերը մշակված են:<br><br>2. Հակակոռուպցիոն ռազմավարությամբ ամրագրված են մոնիթորինգի և գնահատման բարելավված կարգավորումները: | Իրավական ակտերի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>ՏՀՁԿ հակակոռուպցիոն ցանցի 5-րդ գնահատման արդյունքների կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կատարողականի վերաբերյալ զեկույց | ՀՀ արդարադատության նախարարություն | Ոլորտային հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) |
| | Հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների ծրագրի ամենամյա ակնկալվող արդյունքների գնահատման համար իրականացվում են գործնային մոնիթորինգ և գնահատում, որոնք արտահայտում են Ռազմավարության իրականացման արդյունքն արտացոլող հիմնական ցուցանիշը: Գործնային մոնիթորինգը և գնահատումն իրականացվում են ոչ միայն Նախարարության, այլև՝ Կատարող մարմինների կողմից: Գնահատականը տրվում է հայեցողական գնահատման եղանակով և չունենն կատարման աստիճանը բնութագրող չափորոշիչներ: | II | | II | | | | | | |
| | | | Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը վերանայվել են՝ բոլոր հնարավոր բացերի վերհանման և լավարկվելու է մոնիթորինգի/գնահատման մեթոդաբանությունը նպատակով: | Մոնիթորինգի և գնահատման մեթոդական փաստաթղթերը հաստատվել են, դրանց հիման վրա լրամշակվել է մոնիթորինգի և գնահատման էլեկտրոնային հարթակը: | | | | | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ | | | | | | | | | |

| **Գործողություն 5.3.** Վերանայել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությանն առնչվող կարգավորումները և ներառականության շրջանակը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշման մեջ փոփոխությունները հաստատվել են:<br><br>2. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում ՔԿՀ մասնակիցների քանակն ամբողջությամբ համալրված է: | Իրավական ակտի առկայություն<br><br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | ՀՀ արդարադատության նախարարություն | Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամներ<br><br>(համաձայնությամբ) |
| | Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող Վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի N 808-Ն որոշմամբ ՔՀԿ սահմանափակ շրջանակի ներառման հնարավորություն է տրված, բացի այդ՝ հասարակական կազմակերպությունների մրցույթի անցկացման կարգավորումների հստակեցման և հայեցողական դրույթների որոշակիության անհրաժեշտություն է առկա:<br><br>Միևնույն ժամանակ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի հիմնական կազմում ներառված չեն հակակոռուպցիոն բոլոր մարմինները: | II | I | II | | | | | | |
| | | | | 1. Մշակվել են հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող և այլ իրավական ակտերում փոփոխությունների բարելավումներ նախատեսող իրավական ակտերի նախագծերը՝ ապահովելով շահագրգիռ մարմինների ներառականությունը:<br><br>2. Նախագծերը քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամների հետ: | Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերում փոփոխությունները ընդունվել են:<br><br>Առավել լայն ներառականության ապահովման նպատակով անցկացվել է մրցույթ՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի մասնակից ՔԿՀ-ների կազմի | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ամբողջական համալրման նպատակով: | | | | | |
| **Ֆինանսավորում** | Ֆինանսավորում չի պահանջվում | | | | | | | | | |
| **Գործողություն 5.4.** Սահմանել կոռուպցիայի դեմ պայքարի, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման կառուցակարգերը և ապահովել դրանց իրագործումը | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Իրավասու մարմնի իրավական ակտով Կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հասարակական ընկալումների պարզման մեթոդաբանությունը ընդունված է և կիրառվում է:<br>2. Օրենսդրական ակտով հաստատվել են պարբերական հարցումներ իրականացնելու իրավական կարգավորումները և լիազոր մարմինը:<br>3. Տարեկան առնվազն մեկ անգամ իրականացվում է Կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հասարակական ընկալումների պարզման նպատակով հարցում և դրա արդյունքներն ամփոփվում են | Իրավական ակտի առկայություն<br>Տարեկան մոնիթորինգի և գնահատման զեկույց | ՀՀ արդարադատության նախարարություն | Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) |
| | Կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության և հասարակական ընկալումների պարզման նպատակով պարբերական հարցումներ չեն իրականացվում, առկա չէ նման հարցումների իրականացման մեթոդաբանություն: | II | I | II | | | | | | |
| | | | | Մշակվել է կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ մեթոդաբանություն:<br>Մշակվել են պարբերական հարցումներ իրականացնելու իրավական կարգավորումները և լիազոր մարմին սահմանող դրույթը: | Կոռուպցիայի դեմ պայքարի ազդեցության, ներառյալ՝ հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ մեթոդաբանությունը հաստատվել է, պարբերական հարցումներ իրականացնելու իրավական կարգավորումները և լիազոր մարմինը սահմանվել են: | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման տարեկան զեկույցներում: | | | |
| **Ֆինանսավորում** | | Օրենսդրությամբ չարգելված միջոցներ | | | | | | | | |
| **ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿ** | | **5.2. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ** | | | | | | | | |
| **Գործողություն 5.5**. Զարգացնել Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների կարողությունները՝ վերապատրաստումների իրականացման և ուղեցույցների մշակման եղանակներով | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային քանակական և որակական ցուցանիշներ | Ստուգման միջոց | Կատարող մարմին | Համակատարող մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Հավաքագրվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու նշանակած պետական մարմինների և ՏԻՄ մարմինների առնվազն 80%-ի կարիքները:<br>2. Վերապատրաստումներին մասնակցել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու պետական մարմինների և ՏԻՄ մարմինների՝ առնվազն 80%-ը: Վերապատրաստումներն իրականացվել են առնվազն 4 (չորս) ակադեմիական ժամ տևողությամբ: Վերապատրաստումից հետո | Կիսամյակային և ամենամյա մոնիթորինգային հաշվետվություններ<br><br>ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հրապարակումներ<br><br>Ուղեցույցի առկայություն | ՀՀ արդարադատության նախարարություն | Պետական կառավարման համակարգի մարմիններ<br><br>Վարչապետի աշխատակազմ<br><br>Հանրապետության նախագահի աշխատակազմ (համաձայնությամբ)<br><br>Ազգային ժողովի աշխատակազմ (համաձայնությամբ)<br><br>Անկախ և ինքնավար մարմիններ |
| | Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար իրականացվել է ընդամենը 1 վերապատրաստում 2023 թվականին, իսկ վերջիններս գործունեության ուղեցույցներ չունեն: | II | I | II | | | | | | |
| | | | Մշակվել են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցները, շրջանառվել և հրապարակվել են: | Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների համար անցկացվել են վերապատրաստումներ:<br><br>Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների գործունեության ուղեցույցները հաստատվել են: | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | իրականացված գիտե-<br>լիքների ստուգման<br>արդյունքում վերա-<br>պատրաստվածները<br>ցուցաբերել են<br>առնվազն 90%<br>իմացություն:<br>3. Մշակվել և<br>հաստատվել է<br>Հակակոռուպցիոն<br>ծրագրերի պատաս-<br>խանատուների համար<br>առնվազն 1 ուղեցույց: | | | (համաձայնու-<br>թյամբ)<br>ՏԻՄ<br>մարմիններ<br>(համաձայնու-<br>թյամբ) |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |
| **Գործողություն 5.6.**<br>Դոնորների<br>բնականոն<br>աշխատանքների<br>համակարգման<br>մեխանիզմի<br>ապահովում | Ելակետային տվյալներ | Կատարողականի թիրախներ | | | | | Ուղղակի արդյունքային<br>քանակական և<br>որակական<br>ցուցանիշներ | Ստուգման<br>միջոց | Կատարող<br>մարմին | Համակատարող<br>մարմին |
| | | 2023 թ. | 2024 թ. | | 2025 թ. | 2026 թ. | 1. Հակակոռուպցիոն<br>ոլորտում դոնորների<br>աշխատանքների<br>համակարգման | Իրավական<br>ակտի<br>առկայու-<br>թյուն | ՀՀ արդա-<br>րադատու-<br>թյան<br>նախա-<br>րարություն | Փոխվարչապետ<br>Միհեր<br>Գրիգորյանի<br>գրասենյակ |
| | | II | I | II | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թեև դոնորների հետ պարբերաբար իրականացվել են հանդիպումներ, ներգրավվել են նաև շահագրգիռ մարմիններ, սակայն դոնորների և շահագրգիռ մարմինների համաժամանակյա հանդիպումները պարբերական բնույթ չեն կրել, աշխատանքների համակարգման մեխանիզմներ չեն սահմանվել: | | Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է քննարկում, դրա արդյունքների հիման վրա մշակվել է դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ: Մշակվել է հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ, այն համաձայնեցվել է վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ: | 1. Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգման նպատակով վերջիններիս և շահագրգիռ մարմինների հետ իրականացվել է քննարկում, դրա արդյունքների հիման վրա մշակվել է դոնորների աշխատանքների համակարգման ձևաչափ և ընթացակարգ:<br>2. Դոնորների աշխատանքների համակարգման նպատակով անցկացվել է համակարգման նիստ, արդյունքներն արձանագրվել են: | | | ձևաչափը և ընթացակարգը հաստատված են ՀՀ արդարադատության նախարարի համապատասխան հրամանով:<br>2. Վերոնշյալ ակտի հաստատումից հետո տարեկան կտրվածքով իրականացվում է դոնորների աշխատանքների համակարգման առնվազն 3 նիստ, դրանց արդյունքների արձանագրությունները հրապարակվում են: | Դոնորների աշխատանքների համակարգման նիստերի արձանագրություններ<br>Կիսամյակային և տարեկան մոնիթորինգային հաշվետվություններ | | |
| **Ֆինանսավորում** | Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ | | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ



02.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ